ՍԵՓԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

II - IV
դասարաններում
մայրենի լեզու
դասավանդող
ուսուցիչների
համար



ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

II-IV
ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ
ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ
ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

«ՇԱՂԻԿ»
1995

Երաշխավորված է
ՀՀ լուսավորության
նախարարության կողմից

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

II-IV

ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Խմբագիր՝ Ռուբեն Վարդանյան
Սրբագրիչ՝ Դորա Մարտիրոսյան
Նկարիչ՝ Նոյեմբեր Այվազյան
Տեխ. խմբագիր՝ Շուշան Հայրյան
Էջադրող՝ Հասմիկ Բալայան

Տպագրված է տպագրության՝ 22.08.1995թ.: Թուղթ՝ օֆսեթ N1.
Չափը՝ 60×84 1/8: Տպագրությունը՝ օֆսեթ:
Տպագրական 3,5 մամուլ: Տպաքանակ՝ 5000:
ՀՀ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի «Շաղիկ»
հրատարակչություն. Երևան, Հայրապետական գանգված,
Բ-1 թաղամաս, Ա.Բաբաջանյանի փողոց:
Տպագրված է «Շաղիկ» հրատարակչության տպարանում:
Երևան, Հայրապետական գանգված, Բ-1 թաղամաս,
Բաֆֆու փողոց, 4:

© «ՇԱՂԻԿ»
1995

ԴՐՔՈՒՅԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԵՆ

5 II և III դասարանների մայրենի լեզվի ընթերցարանների մեթոդական ուղեցույց (հեղինակ՝ Ա.Պետրոսյան, «Նոր գրքույկ», 1995թ.):

19 II, III և IV դասարանների մայրենի լեզվի դասագրքերի (գիրք-տետրերի) մեթոդական ուղեցույց (հեղինակ՝ Մ.Սիմոնյան, «Շաղիկ», 1995թ.):

47 IV դասարանի մայրենիի ընթերցարանի մեթոդական ուղեցույց (հեղինակ՝ Ա.Հազարյունյան, «Նոր գրքույկ», 1995թ.):

Հարգելի՛ գործընկեր, Ձեր հարցերը, դիտողություններն ու առաջարկները հեղինակներին ուղարկեք հետևյալ հասցեով.

ք.Երևան, ՀՄ կանգված, Բ-1 թաղ, Ա.Բաբաջանյանի փողոց, ՀՀ «Միխթար Սեբաստացի» կրթահամալիր:

Հեռ. 73 29 90
73 23 30

II ԵՎ III ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՅՐԵՆԻԻ ԸՆԹԵՐՑԱՐԱՆՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Աիդա Պետրոսյան

Գրագետ է այն մարդը, որը կարողանում է սեփական մտքերը, գաղափարները, կարծիքը հստակ, անկաշկանդ ձևակերպել-հաղորդել, հասկանալ ու հասկանալի լինել:

Շատ բան երեխան ստանում է նախադպրոցական շրջանում, սակայն ձեռք բերվածը հղկվում մշակվում է ուսումնառության ընթացքում: Այդ առումով հատկապես կարևորվում է կրտսեր դպրոցը (I-IV դասարաններ)՝ որպես «հիմնադիր» շրջան:

Այդ և հետագա տարիներին մայրենիի խնդիրը խոսքի մշակումն է:

Մայրենիի ուսուցիչը

Կրտսեր դպրոցում մայրենիի (ինչպես և մյուս) դասերին պիտի իշխի ապատ, անկաշկանդ, ջերմ մթնոլորտ, որ երեխան չվախենա սխալվելուց, վստահ լինի, որ իր կարծիքը կհարգվի, իր «հայտնագործությունները» կգնահատվեն:

Հենց սկզբից երեխան պետք է գրի այն մասին, ինչը հետաքրքրքիր է, ինչը հուզում է իրեն:

Այդ դեպքում նա կանկուժյուն կունենա պատմել իր աշխարհի, սիրելի մարդկանց, իրերի, հետաքրքրությունների մասին, կուկենա խոսել ընթերցված նյութի մասին:

Ուսուցիչը բոլոր դեպքերում պիտի լսի երեխային, գնահատի նրա աշխատանքը, խրախուսի նույնիսկ ամենափոքր հաջողությունը:

Ուրեմն՝ մայրենիի ժամին ուսուցչի խնդիրներից մեկը երեխայի խոսքային ինքնարտահայտման պահանջմունքի պահպանումն ու զորացումն է:

Մայրենի լեզվի ուսուցչի խնդիրներից մեկն էլ երեխայի ստեղծագործական կարևակայության և մտավոր կարողությունների զարգացումն է:

Ուսուցիչը պիտի կարևորի նաև մտքերի, զգացումների հստակ

և անկաշկանդ արտահայտման անհրաժեշտ հմտություններ մշակումը:

Երեխայի գլուխը «պատրաստի դեղատոմսեր» լցնելով անհնար է այս խնդիրները լուծել:

Գիտելիքը ստեղծման ու կատարման արդյունք է: Խորասուզված աշխատելով, հայտնագործելով ու փորձ ձևոք բերելով է երեխան գրագետ դառնում:

Ուսուցիչը դասի կազմակերպիչն է. նա ստեղծում է անհրաժեշտ աշխատանքային մթնոլորտ, որում ձևավորվում է իսկական ընթերցողը, որը ընդունակ է բանավիճելու, փաստերը համադրելով (հակադրելով) եզրահանգումներ կատարելու, ուշադիր լսելու դիմացինի խոսքը:

Ուսուցիչը աշակերտի գործընկերն է, օգնականը: Նրա կարծիքը բոլորովին էլ պարտադիր չէ դասարանի համար, ընդամենը կարծիքներից մեկն է. դասարանում յուրաքանչյուրն ունի իր սեփականը՝ իր բացատրությամբ:

Մայրենիի ընթերցարանները

Մայրենի լեզվի դասին ոչինչ չի կարող փոխարինել ընթերցարաններին:

Այդ ընթերցարանները II-III դասարաններում «Մատենիկ» են կոչվում: Ընդհանուր անվանումը պատահական չէ. դրանք միասին մեկ ամբողջություն են, մի ծրագրի ամբողջական կատարում:

III դասարանի «Մատենիկը» նախորդի շարունակությունն է՝ ավելի ծավալուն ստեղծագործություններով ու բարդեցված առաջադրանքներով:

Երեխային պիտի տալ միայն իր ներաշխարհին հարազատ, ընկալելի, իր տարիքին համապատասխան ստեղծագործություններ. եթե կենսական անունդը որոշակի տարիք է սկսկալում, ապա հոգևորը՝ առավել ևս:

«Մատենիկների» նյութերն ընտրվել են՝ հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները, նրանց հակումներն ու հետաքրքրությունները:

Ոչ գեղարվեստական (վավերագրական, բնագիտական) տեքստերը. որոնց կեսն է հատուկ ու մատչելի է. լրացնում են գեղարվեստական ստեղծագործությունները. դրանց մեջ բովանդակային կապ կա:

Ընթերցարանների նյութը և դրանց կցված հարցերն ու առաջադրանքներն օգնում են, որ կրթվի երեխաների գեղարվեստական ճաշակն ու մտածողությունը, զարգացնում են երևակայությունն ու տրամաբանությունը:

Ընթերցարանները կազմված են գիրք-տետրի սկզբունքով (ինչպես I դասարանում): Այսինքն՝ այն և՛ ընթերցարան է, և՛ հարցարան, և՛ տետր:

Գիրք-տետրը ունի մի շարք առավելություններ. գիրք-տետրով աշխատելիս երեխան ինքնուրույն է՝ իր մտքերի, խոհերի հետ: Նա սովորում է ոչ միայն ինքնուրույն աշխատել, այլև ստիպված է լուծումներ փնտրել, վճիռներ կայացնել:

Դասագիրքը դառնում է մտերիմ զրուցակից. գեղարվեստական ստեղծագործությունը ընթերցելուց հետո երեխան կարդում է իրեն ուղղված առաջադրանքները և հենց գիրք-տետրում էլ դրանք կատարում:

Աշխատելով աշակերտը միաժամանակ շարունակում է սեփական դասագրքի ստեղծումը, դառնում համահեղինակ, որովհետև հենց այստեղ գրում է իր ստեղծագործությունները, խոհերը, հայտնությունները, հարցեր է առաջադրում, հանելուկներ հորինում, նկարում, ներկում, ձևավորում է ապատ էջերը:

Գիրք-տետրը հեշտացնում է ուսուցչի աշխատանքը, քանի որ նա յուրաքանչյուր աշակերտի հետ անհատապես աշխատելու, համագործակցելու հնարավորություն է ստանում. երեխաների ունակությունների տարբերությունները չեն խանգարի դասի կազմակերպմանը:

Կարդալու մասին

Ընթերցարանների նյութը հիմնականում ընթերցվում է դասի ժամանակ (բացի ծավալուն գործերից): Ամբողջ դասարանը յուր ընթերցում է:

Մենք դեմ ենք նյութը մի քանի անգամ հենց այնպես կարդալուն. դա անհետաքրքիր ու ձանձրալի է երեխայի համար: Մանավանդ որ առաջադրանքների մի ամբողջ խումբ կատարելիս աշակերտը, կամա թե ակամա, մի քանի անգամ պիտի անդրադառնա ընթերցված նյութին:

Բարձրաձայն ընթերցումը ևս անօգուտ և անիմաստ զբաղմունք է, պարզապես ժամանակի կորուստ:

Բարձրաձայն կարդում են դիմացինին ինչ-որ կոնկրետ բան (սեփական ստեղծագործությունը, գաղափարը, միտքը, խոսքի

հաստատումը) հաղորդելու համար: Ընթերցման մեջ անպայման մտնում են նաև անհասկանալի բառերի բացատրությունները, որ տրված են ստեղծագործության վերջում:

Գրավոր առաջադրանքներ

Գեղարվեստական ստեղծագործության ընթերցումն ավարտած աշակերտը, եթե ուսուցչին ուղղված հարցեր չունի, սկսում է կատարել առաջադրանքները:

Գրավոր առաջադրանքները բազմազան են: Դրանց առաջին խումբը նվիրված է բառապաշարի հարստացմանը:

Նմուշ` *Հեքիաթում գտի՛ր այս բառերի իմաստն ունեցող բառակապակցությունները (դարձվածքները).*

մտածել
խոսել
խղճալ
ուրախանալ

Հ.Թումանյան «Անխելք մարդը»

Տեքստում գտած դարձվածքը երեխան գրում է համապատասխան բառի դիմաց:

Փոխարինի՛ր մեկ բառով.
ձայն-ծպտուն չհանել
վնաս տալ
իրավունք տալ
ետ գալ
կանգ առնել
Իսկ այս բառերի փոխարեն պատմվածքում ինչե՞ր են գրված.
շփոթված
ծածկել
իր ասածից չհրաժարվել

Ստ.Զորյան «Հանապարհորդ Ջեկոն»

Եթե ուսուցիչը անհրաժեշտ կհամարի, այդ առաջադրանքների դժվար հասկանալի բառերն ու արտահայտությունները կարող է նախապես բացատրել, սակայն դա մշտական բնույթ չպիտի կրի. չէ՞ որ երեխաների բառապաշարը տարբեր է, օգնել պետք է նրան, ով դրա կարիքն ունի:

Այս առաջադրանքները ճշգրիտ պատասխան են ենթադրում, այսինքն` սխալ պատասխաններն անպայման պիտի ուղղվեն:

Առաջադրանքների մի մեծ խումբ ուղղված է գեղարվեստական ստեղծագործության համակողմանի յուրացմանը, որն ան-

շուշտ կնպաստի աշակերտների գրական ճաշակի ձևավորմանը: Նա պիտի կարողանա ոչ միայն վերարտադրել կարդացածը, այլև դատողություններ անել դրա վերաբերյալ, արտահայտել իր վերաբերմունքը:

Այս դեպքում ուսուցիչը զգույշ պիտի լինի, որ իր կարծիքը պարտադրվող կամ անառարկելի չլինի, այլ դիտվի որպես կարծիքներից մեկը:

Պատասխանները խիստ անհատական, բազմազան են լինելու: Ուսուցիչը պիտի տեսնի ու խրախուսի անսովոր, յուրօրինակ, լեզվական առումով հետաքրքիր պատասխանները:

Այս առաջադրանքները միաժամանակ երեխայի ուշադրությունն են կենտրոնացնում որոշ հատվածների, պատկերների վրա:

Ինչպիսի՞ն է ավտոբուսը. գրի՛ր նրան նկարագրող հատվածը:
Պատմի՛ր` մուկն ինչպե՞ս էր իջնում քաղաքի վրա:

Դ.Բիսեթ «Մուկից վախեցող ավտոբուսը»

Պատմի՛ր` գարունն ինչպե՞ս է գալիս այս բանաստեղծության մեջ:
Թումբը, դաղձը, առուն, ժպիտը, հասկը բանաստեղծության մեջ ինչպիսի՞ն են:

Հ.Սահյան «Գարնանամուտ»

Հեքիաթի աղջկա անունից պատմիր նրա հետ պատահածի մասին:
Հիմա էլ ծառի անունից պատմիր նրա հետ պատահածի մասին:

Հ.Թումանյան «Անխելք մարդը»

Այս խմբի առաջադրանքները հիմնականում տեքստի հետ են կապված: Աշխատելիս երեխան մի քանի անգամ անդրադառնում է նյութին, փնտրում-գտնում է անհրաժեշտ բառը, միտքը, հատվածը` համակողմանիորեն յուրացնելով ստեղծագործությունը: Բացի այդ` նա ավելի ազատ է զգում, հեշտությամբ է կատարում հաջորդ առաջադրանքները` համեմատություններ ու հետևություններ անել, իր վերաբերմունքն արտահայտել:

Միաժամանակ աշակերտը սովորում է ամբողջը մասերի մեջ տեսնել, գլխավորը երկրորդականից տարբերել:

Շարունակի՛ր.
Իմ կարծիքով` անփորձականը...
Ես կարծում եմ, որ «Բարեկենդան» հեքիաթը...

Հ.Թումանյան «Բարեկենդան»

Համեմատի՛ր այս հեքիաթի խելոք եղբորը «Խելոքն ու հիմարը» հեքիաթի մեծ եղբոր հետ:

Հ.Թումանյան «Տերն ու ծառան»

Առաջադրանքների մի խումբ էլ վերաբերում է կերպարներին: Ինչպես նախորդ, այնպես էլ այս առաջադրանքները կապված են *պարզից բարդ* սկզբունքով:

II դասարանում երեխաներին բառաշարք է տրվում, որից պիտի դուրս գրվեն հերոսին համապատասխանողները կամ, պարզապես, պիտի պատմեն հերոսի մասին: III դասարանի վերջում հնարավորին չափ հստակ պիտի բնութագրեն հերոսին, պատճառաբանեն-հիմնավորեն իրենց պատասխանները, փորձեն նկարագրել հերոսին:

Այս խմբից դուրս գրի՛ր Կիկոսի հարազատներին վերաբերող բառերն ու արտահայտությունները. վերնատունը դատարկ, աչքով տալ, կարմանալի, ծալը պակաս, տարօրինակ, «չալ», ասեղի ծակով անցնել, խելքից թեթև, ծամը՝ երկար, խելքը՝ կարճ, էս աշխարհից չի:

Հ.Թումանյան «Կիկոսի մահը»

Բնութագրի՛ր ձկնորսին:
Ինչո՞ւ ես այդպես կարծում:
Ո՞ր հեքիաթների ո՞ր հերոսներին է նա նման:

Հ.Թումանյան «Խոսող ձուկը»

Այս և մնացյալ բոլոր դեպքերում ուսուցիչը պիտի հետևի, որ երեխաները չշեղվեն ստեղծագործությունից, եզրակացություններ անեն՝ տեքստից ելնելով, հաշվի առնելով փաստերը. երբեմն նրանք ոգևորվում են, արտահայտում այնպիսի մտքեր, որոնք ստեղծագործության հետ կապ չունեն:

Առաջադրանքների մի խումբ էլ ուղղված է ստեղծագործական երևակայության զարգացմանը: Շատ են կարևորվում աշակերտի կենսափորձի, ապրումների հետ կապված աշխատանքները (շարադրություններ, նկարագրություններ, տպավորությունների շարադրանք):

Նկարագրի՛ր ձեր բնակավայրը:
Ինչպիսի՞ն կուզեիր, որ լիներ ձեր քաղաքը կամ գյուղը:

Հ.Թումանյան «Թոչունի մտածմունքը»

Պուլ-պուլ մուկիկի անունից մի բարեկամի հրավիրի՛ր՝ կոկոսից դուրս գալու տարեդարձը նշելու:

Դ.Դեմիրճյան «Պուլ-պուլ մուկիկը»

Տատիկի ու պապիկի անունից հայտարարություն գրի՛ր Բոքոնիկի կորչելու մասին:
Հայտարարությունը կարդալուց հետո ավելին ի՞նչ կգրի տատիկին ու պապիկին. այդ նամակն ինքդ գրի՛ր աղվեսի անունից:

Ռուս. ժող. հեք. «Գնդիկ Բոքոնիկ»

Հիմա ինքդ հորինի՛ր.
Երգող ծառերի անտառում

Գրիմ եղբայրներ «Աղվեսն ու սագերը»

Պատմություն հորինի՛ր «խելքի պուտուկ» արտահայտության ուղղակի իմաստով.
Խելքի պուտուկը

«Արտույտն ու երկինքը»

Նկարագրի՛ր ոչ մի բանից մկնիկի բույնը:

Ջ.Ռոդարի «Ոչ մի բանից մարդուկը»

Այս դեպքերում շեշտվում է երեխայի անհատականությունը, ի հայտ է գալիս նրա մտածողության առանձնահատկությունը:

Նա ի՛նչ գրում է, դա է ճիշտը, քանի որ ինքն այդպես է կարծում, այդպես է մտածում, տեսնում, զգում:

«Մատենիկով» աշխատելիս աշակերտները նամակներ, հրավերներ, հայտարարություններ են գրում, ցավակցում, մխիթարում, խրախուսում, շնորհավորում հերոսներին, խորհուրդներ տալիս, մեղադրում կամ արդարացնում նրանց:

Նյութն ավարտելուց հետո (որպես ամփոփում) երեխաներն իրենց գրածները կկարդան իրենց ընկերների և ուսուցչի համար:

Ասենք՝ անցնում են «Տերն ու ծառան»:

Երեխաները նախ կկարդան հեքիաթը:

Կկատարեն գրավոր առաջադրանքները:

Կկարդան իրենց գրավոր աշխատանքները:

Բանավոր աշխատանք

Երբ երեխաները կավարտեն գրավոր առաջադրանքների կատարումը, արդեն կարելի կլինի բանավոր աշխատել:

Աշակերտները նախ պիտի պատճառաբանեն հեղինակի ընտրած վերնագիրը:

Հետո իրենց վերնագիրը կառաջարկեն ու կպատճառաբանեն:

Այնուհետև նրանք կխոսեն ստեղծագործության հերոսների մասին. ովքե՞ր են, որտեղի՞ց են «հայտնվել» այս գործի մեջ, ուրիշ ո՞ր ստեղծագործության մեջ կարող են լինել:

Ձեզ ծանոթ հեքիաթների ո՞ր հերոսներն են այս գյուղում ապրում:

Հ.Թումանյան «Կացին ախպերը»

Հարցերի մի մասի նպատակը անաղոր իրավիճակների ստեղծումն է. նոր հերոսի հայտնվելը հեքիաթում, հերոսների դերերի, հանգուցային լուծումների փոփոխելը:

Եթե կայնի փոխարեն՝
ա) հեռու ստացույց,
բ) հեռախոս
լիներ, հեքիաթն ինչպե՞ս կզարուներ:

Եթե գյուղում հայտնի ստուտասան ապրեր (ասենք՝ ստոտիկ որսկանը), ի՞նչ կպատմեր այս դեպքի մասին:

Հ.Թումանյան «Կայնի ախպերը»

Եթե մութ ամպիկը չլներ արևին, ի՞նչ կլիներ (գուցե արևը ինչ-որ մեկին օգնության կկանչե՞ր):
Եթե արևը բարկանար, ի՞նչ կլիներ:

Ղ.Աղայան «Արևի հրամանը»

Հեքիաթում հարուստի և խորամանկ եղբոր պայմանն այնպես փոխե՛ք, որ տիրոջ բարկանալը օգուտ լինի հենց իրե՛ն (ոչ թե ծառային), և հորինե՛ք շարունակությունը:

Հ.Թումանյան «Տերն ու ծառան»

Հորինե՛ք նոր պատմություն բալկաթցիների մասին, թող նրա՛նք որոշեն՝ կապիկներին և մողեսներին ընտանի դարձնել:

Ֆրանսիական հեք. «Ճանապարհորդություն դեպի լուսին».

Նոր հեքիաթ հորինե՛ք «Բաժակի մեջ»

Դ.Բիսեթ «Գորգի տակ»

Եթե կատուն չմտածեր էլ մկանը չորացնելու մասին, մուկն ինչպե՞ս կպատմեր կատվից. նոր շարունակություն հորինե՛ք:

Հայ ժող. հեք. «Խմած մկան պայմանը»

Շատ կարևոր է, որ երեխաներն իրենք իրենց համեմատեն ստեղծագործությունների հերոսների հետ, նրանց միջոցով անձնական անձը կճանաչեն, իրենց միջոցով հերոսներին կճանաչեն և կգնահատեն: Հարցերը պետք է այսպես ձևակերպել.

ա) Հերոսն ինչո՞վ է նման ձեզ:
բ) Հերոսն ինչո՞վ է տարբերվում ձեզանից:
գ) Նրա (նրանց) փոխարեն դուք ինչպե՞ս կվարվեիք:

Բավականին հետաքրքիր աշխատանք է հեքիաթների ոլոգան կազմելը: Սկզբնական շրջանում ուսուցիչը իր օրինակը պիտի կարդա երեխաների համար: Կարելի է, ասենք, այսպես.

Հորս ծնունդով, մորս կնության վեր կացանք մի օր, հինգ ու մեկ հոգով, թրով-թվանքով որսի գնացինք: Գնացի՜նք, գնացի՜նք, շատ թե քիչ, մին էլ տեսանենք մի պառավ փետի է ման գալիս՝ թոնիրը վառի: Մին էլ թռան եկան երկու ծիտ, երկուսը՝ սատկած, մեկի բերանում էլ իսկի շունչ չկա: Ես անշունչ ծիտը թե՝

- Ով էնպես սուտ ասի, որ ես ասեմ՝ սուտ է, թագավորությանս կեսը կտամ նրան:

Գալիս է մի աղքատ գյուղացի՝ կոտը կոնատակին.
- Տո՛, նկե՛ք, տեսե՛ք, կայնի ախպերն ինչ արեց:

Շարունակությունը երեխաները պիտի հորինեն:

Կարելի է մեկ այլ տարբերակ առաջարկել, որտեղ արդեն հատվածների միջև մտքի կապը պարտադիր չէ:

Լինում է, չի լինում՝ մի պառավ: Էս պառավը իր էծը կթում է, կաթը մեր է դնում, գնում է յախ ու փետ բերի, որ կրակ անի, կաթն եփի:

Ծիտը գնում է, ետ գալիս, թե՝ փուշը ետ տուր ինձ:

Իր մարդկանցով գնում է, որ հանի բերի: Գնում է կարասի բերանը բաց անել է տալի, տեսնում է՝ ձմեռն էս աղքատ հողագործի եկները սատկում են:

- Ներողությո՛ւն, թագավոր, ես վաղ պիտի գայի, ուշացա: Մի մարդ գնաց հեռու երկիր՝ աշխատանք անելու:

- Սրա ընկերն էլ երևի իր նման մի աքլոր կլինի, էս էլ իմ ճաշը...

Կստացվի ուրախ հորինվածք, գուցե՝ անհեթեթություն, բայց կարևորն արդյունքն է՝ երեխան ապատ խաղում է նյութով, կարգացնում է երևակայությունը, մտածողությունը դուրս է գալիս կաղապարներից:

Սկզբնական շրջանում աղյան կկազմեն միայն 2 հեքիաթով: Հետո «օգտագործվող» հեքիաթների թիվն իրենք՝ աշակերտները, աստիճանաբար կավելացնեն: Սա կարող է նաև լավ տնային առաջադրանք լինել: Երեխաներն այդ աղյաններով փոքրիկ գրքույկներ կկազմեն՝ իրենց ձևավորումներով: Եթե դրան ընտանիքի մյուս անդամներն էլ մասնակցեն, հրաշալի կլինի:

Ընդհանրապես, միշտ պիտի խրախուսել ընտանեկան գրքույկների ու թերթերի, ամսագրերի ու բացիկների կազմումը:

Բանավոր աշխատանքի մի քանի ամբողջական նմուշ.

Որտեղի՞ց է գալիս գետակը:
Ինչպիսի՞ն է այս գետակը:
Էլ ի՞նչ գործեր կարող է անել գետակը:
Գետակները ե՞րբ են ծուլանում:
Եթե գետակը չարաճճի լիներ, ինչե՞ր կաներ ճանապարհին:
Էլի ի՞նչ գետ կամ գետակ կարող է լինել (ուրախության, ծիծաղի, բարության):
Ե՞րբ կարող է քարերի գետ առաջանալ:

Հ.Թումանյան «Գետակը»

Վագրն ու ձին որտեղի՞ց էին հայտնվել գորգի տակ:
Նրանք ինչպիսի՞ հյուրեր էին սիրում:
Ձեր կարծիքով՝ վագրն ինչո՞ւ էր ուզում ժամն իմանալ:
Ինչպիսի՞ն է երևակայական անձրևը:
Երևակայական անձրևանոցն ինչպիսի՞ն է:
Ինչպիսի՞ն է երևակայական խոմփոցը:
Եթե մայրիկի ավելն էլ երևակայական լիներ, ի՞նչ կլիներ:
Ո՞ւր էին գնացել ձին ու առյուծը, որ վերջում աղջիկը նրանց իր տետրում նկարեց:
Որտե՞ղ են ապրում բոլոր «երևակայականները»:
Նրանք ինչո՞վ են տարբերվում «սովորականներից»:

Դ.Բիսեթ «Գորգի տակ»

Ճուտիկը դուր եկա՞վ ձեզ: Ինչո՞ւ:
Ինչո՞ւ է ճուտիկը կարծում, որ ինքը մեծ է:
Ինչպիսի՞ն էր աքլորը:
Ինչպիսի՞ն էր ճուտիկը:
Այս դեպքից հետո եթե գորտը գոռոզանար, ճուտիկն ի՞նչ կասեր:

Կ.Չուկովսկի «Ճուտիկը»

Ինչո՞ւ է պատմությունը «Մոռացված ծննդյան օրը» կոչվում:
Ձեր կարծիքով՝ ծննդյան օրերն ինչո՞ւ են կորչում:
Եթե Յալմարը գնար հայրիկի կորցրածը փնտրելու, բայց նրա ծննդյան օրը բուն գտներ, ի՞նչ կլիներ:
Դուք ինչպե՞ս կվերնագրեիք հեքիաթը: Ինչո՞ւ:
Ի՞նչ գույնի է ամենալավ ծննդյան օրը:
Ինչպիսի՞ն են լինում կորած ծննդյան օրերը:

Դ.Բիսեթ «Մոռացված ծննդյան օրը»

Ինչո՞ւ է բանաստեղծությունը «Կանաչ ախպեր» կոչվում:
Բնության մեջ ինչե՞րն են կրնգուն երգեր երգում:
Ի՞նչ գույներ ունի գարունը (հիշե՛ք ծաղկած ծառերը, երկինքը...)
Եթե դուք լինեիք բնության տիրակալը կամ տիրուհին, էլ ի՞նչ կավելացնեիք բնության արածին (չէ՞ որ գարնանը շատ բան չի փոխվում. ասենք՝ պատերը, փողոցները...):

Հ.Թումանյան «Կանաչ ախպեր»

Ուրիշ ինչպե՞ս կվերնագրեիք առակը:
Ճպուռը մրջյունի ի՞նչն է, իսկ մրջյունը ճպուռի ի՞նչն էր:
Քեզ ծանոթ հեքիաթներից ո՞ր հերոսներն են ճպուռին նման:
Մրջյունը ճի՞շտ վարվեց ճպուռի հետ:
Մրջյունի փոխարեն դուք ինչպե՞ս կվարվեիք:
Նկարագրե՛ք ճպուռին ամռանը և ձմռանը:
Նկարագրե՛ք մրջյունի բույնը:
Պատմությունն այնպես փոխե՛ք, որ մրջյունի բույնը խղճա

ճպուռին, դուռը չփակի, և ճպուռը ներս գա, հետո ի՞նչ կլինի:
Ընդունենք՝ ամառն է մեղավոր, որ ճպուռը չի աշխատել: Ինչպե՞ս է պատահել դա:

Ա.Խնկոյան «Ճպուռն ու մրջյունը»

Ինչո՞ւ են ծաղիկները ձմռանը քնում:
Ո՞վ է կարում ձյուն ծածկոցը:
Ի՞նչ երազ են տեսնում ծաղիկները ձյուն ծածկոցի տակ:
Ինչպիսի՞ն է ձմռան արևը:
Ուրիշ ինչպե՞ս կնկարագրեիք բանաստեղծությունը:

Հ.Թումանյան «Ծաղիկներ»

Որտեղի՞ց էր հայտնվել ոչ մի բանիկ մարդուկը:
Ինչպիսի՞ն են ոչ մի բանիկ

մարդը	*արևը*
մուկը	*լուսինը*
պանիրը	*երգը*
պատը	*փոշեկուլը*

Իսկ ոչ մի բանից լայն ու ծիծաղը ինչպիսի՞ն են:
Աշխարհում ամենամեծ ոչ մի բանը ի՞նչը կարող է լինել:
Պատմությունից հորինե՛ք.
Ոչ մի բանից լայն ու ոչ մի բանից ծիծաղը

Ջ.Ռոդարի «Ոչ մի բանիկ մարդուկը»

Բանավոր աշխատանքն ավարտելուց հետո երեխաները կարդում են մինչ այդ գրածները (տես՝ «Գրավոր առաջադրանքներ»):

Այս ամենից հետո շատ հեշտ է դասարանական կամ տիկնիկային ներկայացումներ կազմակերպելը: «Մատենիկներում» ընդգրկված ստեղծագործությունների մեծ մասն այդ հնարավորությունը տալիս է, մանավանդ որ դա լավագույն միջոցն է նյութն անգիր սովորելու համար:

Չափածո ստեղծագործություններ

Բանաստեղծությունը նախ ներկայացնում է ուսուցիչը (ասմունքում է): Հետո դասարանին առաջարկվում է ուշադիր կարդալ՝ պատրաստվելով ասմունքի. նախապես որոշել՝ ինչ տոնով պիտի արտասանեն, ո՛ր բառերը կամ հատվածը պիտի շեշտեն և որտեղ՝ դադար տան: Հետո ամեն մեկը բանաստեղծությունը կարդում է ի՛ր մեկնաբանությամբ. նա ասմունքում է ընկերների և ուսուցչի համար:

Այնուհետև կատարվում են գրավոր առաջադրանքները:

Չափածո ստեղծագործությունների առաջադրանքները կա-

տարելիս երեխաները հաճախ են նկարում: Դա ինքնանպատակ չէ: Նկարելու համար երեխան ավելի ուշադիր պիտի կարդա բանաստեղծությունը, տեսնի պատկերները: Նկարի միջոցով, նույնիսկ ենթագիտակցորեն, նա վերարտադրում է իր կգացածը:

Աշակերտը պիտի փորձի նաև բացատրել որոշ հատվածներ՝ ըստ ի՛ր ընկալման. դրանք հիմնականում երկտող քամ քառատող պատկերներ են, որոնց վրա, ըստ մեկ, պիտի հրավիրել նրա ուշադրությունը:

Բանաստեղծությունից առանձնացնելով գույն ունեցող տողերը՝ երեխան տեսնում է գույն-պատկեր կապը:

Բանավոր աշխատելիս նախ բանաստեղծությունը արձակ են շարադրում: Հետո համեմատում են 2 տարբերակները (չափածո և արձակ):

Փոխում են որոշ մակդիրներ՝ իրենց հոմանիշներով, և դարձյալ համեմատում բնագրի հետ: Ո՛րն է ավելի գեղեցիկ, հաջողված, պատկերավոր:

Ապատ (դատարկ) էջեր

Ընթերցարաններում մի շարք էջեր բոլորովին դատարկ են: Դրանք աշակերտի էջերն են. նա՛ պիտի գրի և ձևավորի դրանք:

Ի՞նչ նպատակով կարելի է օգտագործել այդ էջերը: Ամենից առաջ դրանք կարող են փոքրիկ լրագրեր դառնալ: Թեման աշակերտն է ընտրում, եթե դժվարանում է, ուսուցիչն օգնում է:

Լրագրի նյութ կարող է դառնալ դասի թեման, և դա լավագույն լուծումը կլինի:

Այսինքն՝ կարող են լինել գարնանային, աշնանային, անտառային, թռչունների. դմբոնների, իմաստունների և այլ լրագրեր: Թեման ինքը կհուշի և՛ լրագրի անունը, և՛ բովանդակությունը:

Աշակերտը դառնում է իր լրագրի և՛ հեղինակը, և՛ ձևավորողը: Նա՛ է անվանակոչում իր էջը, ինչպես լրագիրն են անվանակոչում:

Այնտեղ երեխաները հայտարարություններ, հրավերներ, հրամաններ, շնորհավորանքներ, մխիթարանքներ, հոդվածներ, ակնարկներ կգրեն, կձևավորեն, և էջ-լրագիրը կհավաքվի:

Ահա՛ մի նմուշ նախորդ աշխատանքներից: Էջը կոչվում է «Անտառային...»

Երեկ անտառում ուժեղ քամի բարձրացավ: Նա պոկեց-տարավ 2001 տերև, քշեց 199 մոծակ, 308 մլակ, կոտրեց 181 ճյուղ: Կոտրված ճյուղերը բուժվում են:

Վաղը Առյուծ արքայի որդու՝ Կորյունի հարսանիքն է: Նա ամուսնանում է հարևան անտառի արքայադստեր հետ: Հրավիրվում են անտառի բոլոր բնակիչները: Բոլորի կյանքի անվտանգությունը երաշխավորվում է:

Թագավորական լրատվական կենտրոն

Ապատ էջին աշակերտները կարող են գրել իրենց հորինած հեքիաթներն ու պատմությունները, կպմած աղյանները և ձևավորել:

Այդ էջին նրանք կարող են հետաքրքիր տեղեկություններ գրել՝ կապված դասի թեմայի հետ: Ասենք՝ հեքիաթը աղվեսի մասին է. տարբեր գրքերից, հանրագիտարաններից կարող են դուրս գրել բնագիտական տեղեկություններ աղվեսի մասին:

Տնային աշխատանքներ

II-III դասարաններում դասագրքից տնային աշխատանք չի տրվում:

Սակայն, եթե III դասարանի ստեղծագործությունը ծավալուն է, ժամանակ շահելու համար կարելի է հանձնարարել, որ այն կարդան տանը:

Կամ՝ եթե դասարանի մեծ մասն ավարտել է հանձնարարված նյութի հետ կապված աշխատանքը, կարելի է հետ մնացողներին հանձնարարել, որ աշխատանքն ավարտեն տանը: Թեև պարտադիր չէ, որ բոլորն առաջադրանքները կատարեն մինչև վերջ: Յուրաքանչյուրն աշխատում է իր կարողությունների չափով, եթե կլինեն դժվարացողներ, պետք չէ նրանց ստիպել:

Տանը երեխաները կարող են նամակներ գրել (տնօրենին, ուսուցչին, ինչ-որ մեկին), բացիկ-շնորհավորագրեր պատրաստել իրենց ընկերների կամ ընկերուհիների ծննդյան օրվա, որևէ տոնի առթիվ:

Նրանք կարող են անհատական, ընտանեկան կամ դասարանական լրագրեր ստեղծել:

Իհարկե, ամենօրյա տնային առաջադրանքներն ընդունելի չեն:

Ամփոփում

Նախակրթարանի ընթերցարաններով ընթերցել սովորեցնելը չի հանգեցնում սուկ կարդալու տեխնիկայի ձեռքբերմանը: Կարդալու իրական ունակությունը (գրագիտությունը) ստեղծա-

գործությունը հասկանալու և գնահատելու ունակությունն է, կարդալու ընթացքում ձևավորվող ճաշակը:

Աշխատելով կրտսեր դպրոցի ընթերցարաններով (I - IV դաս.), գործնական քերականության դասագրքերով՝ կրտսեր դպրոցն ավարտած աշակերտը պիտի կարողանա.

- մտքում կարդալ, կարդացածը հասկանալ, գրավոր և բանավոր վերապատմել, վերաբերմունք արտահայտել,
- բանավոր և գրավոր ազատ, հասկանալի արտահայտել իր մտքերը,
- տրված թեմաներով ստեղծագործական և նկարագրական շարադրություններ գրել,
- փոքր բառարաններից, մանկական հանրագիտարաններից օգտվել:



II, III ԵՎ IV ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ (գիրք-տետրերի) ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Մարիետ Սիմոնյան

Մինչև պատանեկան տարիքը ոչ մի վերացական դասավանդում, բառիս խիստ իմաստով, պիտանի չէ երեխային: Նա յուրացնում է միայն կոնկրետը: Կարելի է նրա վզին փաթաթել վերացականը, բայց նա դա չի ընկալի: Ուստի, սխալ է նրան այդ տարիքում ստիպել, որ յուրացնի քերականական սահմանումներ, տանջել նրան՝ տալով, օրինակ, գոյական անվան, բայի, ենթակայի, լրացույցի և այլնի սահմանումները:

Դիստերվեգ

Երեխան մայրենի լեզվի կրողն է: Լավ թե վատ, ճիշտ թե սխալ, այդ լեզվով հաղորդակցվում է՝ արտահայտում է մտքեր, հասկանում է դիմացինին: Լեզուն ամբողջական կառույց է, որն ունի՛ յուրաքանչյուր երեխա: Նա այն կրում է՝ առանց նկատելու իր լեզվի օրինաչափությունները, առավել ևս՝ առանց կանոնարկելու դրանք: Մայրենի լեզուն հարապատ է երեխային, մոտ է, չի վախեցնում: Որպես ուսումնառության նյութ այն գրեթե անփոխարինելի է: Սակայն այստեղ կա մի լուրջ խոչընդոտ. լեզուն վերացական երևույթ է: Քերականությունը գիտություն է լեզվի մասին և հասկանալի է, որ նույնպես վերացական է: Մայրենի լեզվի ուսուցման տարիների փորձը ցույց է տալիս, որ երեխան այդ տարիքում հակված է կոնկրետը, տեսանելին, շոշափելին ընկալելու. կրտսեր դպրոցում քերականության տեսության ուսուցումն անօգուտ է, նրա համար անմատչելի: Երեխան իր չուսումնասիրած, չհետազոտած, վերացական լեզուն չի կարող կանոնարկել, իսկ պատրաստի կանոնները առանց ընկալելու սերտել տալը ոչ միայն օգտակար չէ, այլև վնասակար է: Այստեղ է, որ խիստ կարևորվում է քերականության մատուցման ինչքանն ու ինչպեսը:

Ինչպես ցանկացած առարկայի, այնպես էլ քերականության ուսուցումը դպրոցում ինքնանպատակ լինել չի կարող, ուրեմն նախ նշենք, թե քերականությունն ի՛նչ հմտություններ կարող է զարգացնել: Ահա դրանցից մի քանիսը.

- դիտողականություն,
- երևույթների նկատմամբ վննական, քննական հայացքի մշակում,
- տրամաբանության կարգացում. այն է՝
  - վերլուծելու և համադրելու հմտությունների կարգացում,
  - մասնավոր դիտարկումներով օրինաչափությունների հայտնագործում,
  - ընդհանրացումներ կատարելու հմտության մշակում:

Մեր կարծիքով, հատկապես կրտսեր դպրոցում քերականություն ուսուցանելիս, պետք է ընտրվեն միայն լեզվական այն երևույթները, որոնք երեխան կարող է ինքնուրույն դիտարկել, քննարկել, եզրահանգումներ անել, սեփական դիտարկումներով հայտնագործել: Եվ միայն այս դեպքում է, որ քերականության ուսուցումը կարող է վարգացնել թվարկված կարևորագույն հմտությունները: Քերականության այսպիսի ուսուցումը համարում ենք ակտիվ յուրացում, որն էլ բերելու է հմտությունների վարգացմանը:

Սա մեր մոտեցումն է քերականությանը, որի հիման վրա կազմվել են II, III, IV դասարանների մայրենի լեզվի գիրք-տետրերը: Այստեղ միայն քերականություն չէ, որ ընդգրկված է, որովհետև մենք լեզվի ուսուցում ասելով միայն քերականության ուսուցում չենք հասկանում: Որպես կենդանի, վարգացող համակարգ՝ լեզուն անընդհատ փնտրում է մտքի, կգացմունքի, ապրումի արտահայտության համարժեք ձևեր: Գիրք-տետրերում վարժությունների, առաջադրանքների, շարադրությունների բազմազանությունն ու մատուցման յուրահատկությունը նպատակ ունեն նպաստելու երեխայի գրավոր ինքնարտահայտման պահանջմունքի կորացմանը:

Գիրք-տետրերում ընդգրկված են լեզվաբանության գրեթե բոլոր բաժինները, սակայն ոչ ամբողջությամբ, այլ ըստ մատչելիության, այնքանով, որքանով աշակերտը կարող է հնրնուրույն դատողություններ անել տվյալ լեզվական երևույթի մասին:

Գիրք-տետրերում վարժությունները, առաջադրանքներն ու հարցերը բաժիններով չեն տրված, այլ խառն են՝ *պարզից բարդ* սկզբունքով:

Դրանք նախատեսվում են առավելագույն ինքնուրույն աշխատանքի համար:

Հնչյունաբանություն

Մենք աշակերտին հնչյունների դասակարգումը չենք ներկայացնում, որքան էլ կարևորենք նրա դերը լեզվական տարբեր երևույթներ բացատրելու հարցում: Հնչյունների դասակարգումը բավականին բարդ երևույթ է՝ կապված նաև արտասանական ապարատի հետ և երեխայի համար ո՛չ տեսականորեն, ո՛չ էլ գործնականում հաղթահարելի չէ:

Գիրք-տետրում հնչյունաբանությունից առաջարկված են վարժություններ, որտեղ աշակերտը տեղաշարժում է հնչյունը (տառը), դիտում է նրան տարբեր դիրքերում, փոխում է և արդյունքում տարբեր բառեր է ստանում: Աշակերտը տեսնում է, որ մեկ հնչյունի (կամ տառի) փոփոխությունից կամ տեղաշարժից փոխվում է բառիմաստը: Տեսնում է, որ նույն հնչյունախմբով, բայց հնչյունների տարբեր դասավորություններով տարբեր բառեր է ստանում: Կարևորվում է հնչյունը որպես առանձին, կարևորագույն միավոր: Հնչյուններով բառեր կազմող երեխան, որպեսզի հնարավորին չափ շատ բառեր գրի, արագ օգտագործելով իր ակտիվ բառապաշարը, սկսում է պրպտել, գտնել նաև այնպիսի բառեր, որոնք քիչ է գործածում: Պակաս կարևոր չէ նաև հնչյունները տարբեր դիրքերում փորձող և հանկարծ ծանոթ բառ հայտնաբերող երեխայի հրճվանքը:

Ահա այդ վարժություններից մի քանիսը.

Ո՛վ այս տառերով շատ բառեր կկազմի.

ա) հ, ա, ր, ի, ու, ն, տ, ս,

բ) ձ, կ, ա, մ, ո, ու, տ, ե, ց:

Ո՞վ ամենի շատ բառ կարող է ստանալ՝ մեկական տառ փոխելով:

թաց-լաց-

լոր-

Այս բառի տառերով էլ կարո՞ղ ես նոր բառեր կազմել.

արքայադուստր

Վանդակների մեջ ամեն անգամ մեկ տառ ավելացրո՛ւ այնպես, որ նոր բառ ստանաս:

Հնչյունափոխություն

Բառակազմության (բարդեցում, ածանցում) կամ ձևակազմության (հոլովում, խոնարհում, հոգնակիակազմություն) ժամանակ աշակերտը հաճախ է հանդիպելու հնչյունափոխության երևույթին: Մենք հարցադրումներով աշակերտի ուշադրությունը հրավիրում ենք դրա վրա: Բառի հետ կապված փոփոխությու-

նը աշակերտն է արձանագրում. ո՛ր հնչյունը փոխվեց, ի՛նչ դարձավ, ի՛նչ կատարվեց նրա հետ: Այս վարժությունները կարգավորում են աշակերտի լեզվական դիտողականությունը: Նա ուշադիր է դառնում բառի, նրա հետ կատարվող փոփոխությունների նկատմամբ: Սա օգնելու է բառի մեջ մտնող բաղադրիչների ճիշտ վերականգնմանը, նաև՝ բառիմաստի ընկալմանը:

·Օրինակներ՝

Թաքնված բառը գտի՛ր և գրի՛ր՝ այդ բառերի հետ ի՛նչ փոփոխություններ են կատարվել.

ա) հարկասիրություն, սիրահարվել, ինքնասիրահարված, մարդասիրություն,

բ) մոխրագնել, մոխրագույն, մոխրոտ, մոխրագատ, մոխրատիտիկ,

գ) լուսատիտիկ, լուսավորել, լուսամուտ, լուսաբաց, լուսաշող,

դ) լուսնաշող, լուսնեղջյուր, լուսնյակ:

Գտի՛ր թաքնված բառը և նրա մեջ կատարված փոփոխությունները գրի՛ր.

ա) երկրագունդ, երկրամաս, երկրաչափություն, երկրաբան, երկրային,

բ) լրջանալ, լրջություն, լրջախոհ, լրջմիտ,

գ) գնդակ, գնդասեղ, գնդաձև, գնդացիր,

դ) աղջնակ, աղջկական:

Վ ա ն կ

Կան վարժություններ, որտեղ աշակերտն աշխատում է վանկերի հետ (միացնում է վանկերը, ստանում բառեր, բառի մեջ փոխում է վանկը, այլ բառ ստանում...): Այս վարժություններն օգնում են, որ աշակերտը վանկն ընկալի որպես հնչյունաբանական-արտասանական մեկ միավոր (հատկապես որ նա իր լեզվակցագործությամբ այդպես էլ ընկալում է): Բառի մեջ (հատկապես բազմավանկ բառի) վանկը ճիշտ սահմանազատող աշակերտը կարողանում է նաև գրավոր ճիշտ վերարտադրել բառը: Վանկի ճիշտ կազմությունը կօգնի նաև բառի հնչական պատկերի ընկալմանը:

Օրինակներ՝

Սրանք վանկեր են: Փորձի՛ր միացնել և բառեր ստանալ.

այսպես՝ ծա-ղիկ - ծաղիկ

կա, մա, ղիկ, սին, սե, տիտ, ծա, լու, տու, ղան:

Աշակերտի ուշադրությունն է հրավիրվում նաև գաղտնավանկի, վանկատման ժամանակ նրա գրության վրա:

Վանկին այնպիսի վանկեր փորձիր ավելացնել, որ բառեր ստացվեն: Գրի՛ր այդ բառերը:

այսպես՝ լր-սել, ռել, րիվ - լսել, լռել, լրիվ

սր-

ձր-

ծր-

գր-

կրո-

խրն-

բրո-

Նկատեցի՛ր, որ բառն առանց վանկատելու գրելիս ը-ն չի գրվում: Այդ բառերն արտասանի՛ր: Տեսնո՛ւմ ես՝ որտեղ է թաքնվում ը-ն:

Ուղղագրական վարժություններ

«Ուղղագրության ուսուցումը համարվում է գրավոր խոսքի ուսուցման հիմնական խնդիրը. մինչդեռ ուղղագրությունը գրավոր խոսքի ուսուցման միայն արտաքին կողմն է, տեխնիկական կողմն է: Գրավոր խոսքի հիմնական կողմը շարադրելու հմտություն մշակելն է».

Արարատ Ղարիբյան

Մենք այս մոտեցման հետ լիովին համաձայն ենք և ուղղագրությունը (ուղղագրական դժվարություն ունեցող բառերի գրությունը) համարում ենք գրագիտության բաժիններից մեկը: Մինչև ուղղագրական վարժություններին անցնելը ուսուցիչն արդեն բավ[illegible] ընթերցարանների նյութի հիման վրա, աշակերտների ուշադրությունը հրավիրած կլինի մի շարք հնչյունների, բառի տարբեր դիրքերում նրանց գրության առանձնահատկությունների վրա: Դրանից հետո արդեն, երբ գիրք-տետրերում հանդիպում են վարժություններ, որոնք երեխայի ուշադրությունն են հրավիրում ուղղագրական դժվարություն ունեցող բառերի գրության վրա, ուսուցիչը գործնականում կարող է ստուգել, թե երեխան որքանով է յուրացրել նյութը:

Սա ե տառի բաղաձն է: Այստեղ ապրում են ե տառով սկսվող բառերը: Նրանց տները նկարի՛ր, բնակիչների անունները գրի՛ր, նրանցից մի քանիսի մասին պատմի՛ր:

Սա ո տառի փողոցն է: Այստեղ ո տառով սկսվող բառեր են ապրում: Բնակիչներին նկարի՛ր, անունները գրի՛ր, նրանցից մի քանիսի մասին պատմի՛ր:

Բառերը գտի՛ր և վանդակները լրացրո՛ւ.

1. սողացող կենդանի
2. օգուտ չունեցող
3. օդանավ վարող
4. օդային նավ
5. օր, որն ընկած է երեկվա ու վաղվա արանքում
6. գիշերն ու կեսօրը միասին

Բառերը գտի՛ր և վանդակները լրացրո՛ւ.

1. ջրի կաթիլներ, որոնք թափվում են երկնքից
2. պատուհան-լուսամուտ, լուսին-լուսնյակ, արեգակ-...
3. հաստ-բարակ, բարձր-ցածր, վերև-...
4. առաջին բառը, որը մարդիկ սովորաբար ասում են իրար հանդիպելիս
5. - Ա՛յ փոքրիկներ, ա՛յ սիրուններ,- ասաց քամին ..... ,-
Աշուն եկավ, մոտ է ձմեռը, ի՛նչ եք դողում ծառի ծերին...
6. Սա այն է, որով թռչուններն ու միջատները կարողանում են թռչել
7. Ձեր կողքի բնակարանում կամ տանը ապրողը
8. չար-բարի, կարճ-երկար, սպիտակ- .....:

Բ ա ռ ա գ ի տ ու թ յ ու ն

Բարդ բառեր

Երեխային տրվում են «քանդած բառեր», որոնք «հավաքում է» ու ստանում իրեն ծանոթ բառերը, ինքն է բառերը քանդում և տեսնում նրա բաղադրիչները, դիտարկում է այն փոփոխությունները, որոնք բառերի հետ կատարվում են բառաբարդման կամ ածանցման ժամանակ, քննում է ածանցների իմաստները, լեզվական տրամաբանությամբ բացատրում է իրեն անծանոթ բառերը, տեսնում է հոդակապը և բացատրում է դրա դերը:

Բերենք օրինակներ՝

Ա. Բարդություններ, որոնք ունեն ինքնուրույն գործածություն ունեցող նույն բաղադրիչը (արմատական բառ):

Այս բառերին ուշադիր նայի՛ր: Գրի՛ր, թե դրանց մեջ որ մասն է կրկնվում.

ա) հյուրասեր, հյուրանոց, հյուրեր, հյուրասենյակ, հյուրասիրել,
բ) ընկերություն, ընկերովի, խաղընկեր, դասընկեր, ընկերասեր,
գ) դասացուցակ, դասամիջոց, դասարան, դասընկեր:

Բ. Բարդություններ, որոնք ունեն նույն բաղադրիչը, որն ինքնուրույն գործածություն չունի (հնչյունափոխված է).

Այս բառերում ո՞ր նույն բառն է թաքնված.

ա) ծաղկման, ծաղկանոց, ծաղկեփունջ, ծաղկահովիտ, Ծաղկաձոր,

բ) լուսանալ, լուսավոր, Լուսաբեր, լուսաբաց, լուսամուտ,

գ) ջրոտ, ջրել, ջրային, ջրծաղիկ, Ջրահովիտ, ջրահարս, ջրհոր, ջրիմուռ, ջրաղաց:

Գ. Անհոդակապ բարդություններ, որոնց բաղադրիչները արմատական բառեր են.

Երկու բառ այնպես միացրո՛ւ, որ ծանոթ բառ ստանաս.
այսպես՝ խաղ-ընկեր - խաղընկեր
ծով, դաս, երես, երեսուն, քառասուն
ընկեր, ափ, հինգ, սրբիչ, յոթ

Դ. Հոդակապով բարդություններ, որոնց բաղադրիչները արմատական բառեր են:

Բառերն այնպես միացրո՛ւ, որ քեզ ծանոթ բառեր ստացվեն-.այսպես՝ արև-ա-ծաղիկ - արևածաղիկ

օդ, տուն, մայր, գավար, դաս
ա
քաղաք, գույն, սենյակ, նավ, ծառ

Ե. Անհոդակապ բարդություններ, որոնց բաղադրիչներից մեկը հնչյունափոխված է, մյուսը՝ արմատական բառ:

Երկու բառ այնպե՛ս միացրու, որ ծանոթ բառեր ստանաս.
այսպես՝ ձյուն-ծաղիկ -ձնծաղիկ

ջուր, ծաղիկ, թռչուն
ամառ, հոր, հեղեղ, ծաղիկ, որս

Զ. Հոդակապով բարդություններ, որոնց բաղադրիչներից մեկն արմատական բառ է:

Բառերն այնպես միացրո՛ւ, որ քեզ ծանոթ բառեր ստացվեն.
ձյուն, մարգուր, կարմիր, շուն, երկիր
ա
գունդ, գնդիկ, գույն, սեր, ձուկ, գայլ

Ինչպես գիտենք, ածանցը ևս իմաստային միավոր է, չնայած այն բանին, որ այն նյութական իմաստ չի արտահայտում, այլ ունի վերաբերական ընդհանուր իմաստ: Սկզբում աշակերտը օգտագործում է ածանցը, կապում է նոր բառ, տեսնում է նրա

բառակազմական արժեքը, ապա գտնում է նաև ածանցի արտահայտած իմաստը: Մենք առանձնացրել ենք այն ածանցները, որոնք նախ՝ բառակազմության մեջ առավել ակտիվ են, նրանցով կազմված բառերի ավելի շատ ենք հանդիպում, երկրորդ՝ նրանց արտահայտած իմաստը երեխայի համար տեսանելի է, և աշակերտն ինքնուրույն կարող է դուրս բերել այդ իմաստը:

Ահա մի քանի օրինակ.

Կարո՞ղ ես պտղի անունը ծառի անուն դարձնել.

ծիրան, տանձ, դեղձ, բալ, խնձոր, կեռաս, սալոր, ընկույզ, թուզ, թութ:

Նկատեցի՞ր՝ ինչպես պտղի անունը ծառի անուն դարձավ: Գրի՛ր այդ մասնիկը: Ապրե՛ս:

Մեկ բառով գրի՛ր.

ոչ շատ հաստ - հաստավուն

ոչ շատ դեղին - դեղնավուն

ոչ շատ կարմիր -

ոչ շատ կարճ -

ոչ շատ կապույտ -

ոչ շատ կանաչ -

ոչ շատ սպիտակ -

Ի՞նչ մասնիկ ավելացրիր, այդ մասնիկը գրի՛ր:

...... մասնիկը ցույց է տալիս ինչ-որ բանի .... լինելը:

Մեկ բառով գրի՛ր.

բնակվելու տեղ - բնակարան

ննջելու տեղ -

նստելու տեղ -

վառելու տեղ -

ճաշելու տեղ -

արձելու տեղ -

դատելու տեղ -

խորհուրդ անելու տեղ-

Ի՞նչ մասնիկ ավելացրիր, այդ մասնիկը գրի՛ր: Այդ մասնիկն ի՞նչ է ցույց տալիս:

..... մասնիկը ....է ցույց տալիս:

ա հոդակապը մասնիկ է, բառ չէ և ինքնուրույն գործածություն չունի: Այն բառի իմաստակիր մասերն է իրար միացնում: Դա էլ ուզում ենք, որ աշակերտը գտնի:

Դրան են ուղղված հետևյալ վարժությունները.

Բառերն այնպես միացրո՛ւ, որ քեզ ծանոթ բառեր ստացվեն.

խաղ, կարճ, հաց, ավազ, ցածր, մեծ, սև, դաս, անձրև, քաղցր, հաց, սառը,

ա

հարկ, հասակ, հատիկ, դաշտ, ցարդ, մատյան, տուն, հող, համ, ջուր,

ա-ն այս բառերի հետ ի՞նչ է անում:

Բառերն այնպես միացրո՛ւ, որ քեզ ծանոթ բառեր ստացվեն.

կնունք, ցուլ, խնդիր, նարինջ, բռունցք, կարմիր, ծաղիկ

ա

գույն, մարտիկ, տոտիկ, մարս, հայր, մարտ, հովիտ, գիրք, թուշ, մայր

Գրի՛ր՝ ի՞նչ է անում ա-ն:

Այս ամենից հետո աշակերտը չի դժվարանում ինքնուրույն բացատրել տրված բառերը, ցույց տալ նրանց կազմությունը:

Բառերն ինքդ բացատրի՛ր.

արևմուտք -

դասագիրք -

գազարագույն -

դասղեկ -

կարդատուփ -

ձեռագործ -

կարգապահ -

Բառակազմական վարժություններից հետո, երբ աշակերտը բազմիցս «քանդում», «հավաքում» է բառերը, աշխատում է բարդ և ածանցավոր բառերի բաղադրիչների հետ, շփվում է ինչյունափոխված արմատների հետ, պարզում է հոդակապի դերը, նա գործնականում յուրացնում է բառակազմությունը, բառերի տեսակներն ըստ ձևի և արտահայտած իմաստների: Այնուհետև մենք առաջարկում ենք բացատրել այնպիսի բառեր, որոնց աշակերտը ամենայն հավանականությամբ հանդիպած չի լինի:

Այս բառերը բացատրի՛ր.

լուսնիկ- լուսնաչյա -

արևակն - ծովաքաղիկ -

ձյունապատ -

Հոմանիշություն

Հոմանիշությունը նկարագրվող վարժությունների բազմականին մեծ տեղ է հատկացված: Մենք շատ կարևորում ենք լեզվական այս երևույթը կարծում ենք, որ հոմանիշային հարս-

տությունը լեզվի հարստության չափանիշներից է: Եվ որքան աշակերտը լավ տիրապետի այդ երևույթին, այնքան ապատ կլինի լեզվի գործածության մեջ, կխուսափի անհարկի կրկնություններից, անկաշկանդ կլինի մտքերը հաղորդելիս, անհրաժեշտության դեպքում լեզվական փոխակերպումներ կկատարի:

Հոմանիշությունը մենք դիտում ենք որպես լեզվական լայն երևույթ. ոչ միայն բառային, քերականական՝ ձևաբանական, շարահյուսական հոմանիշություն, այլև նույն մտքի ուրիշ ձևակերպում, այլ արտահայտչաձև, համարժեք մտքի հաղորդում: Սա համարում ենք լեզվական շատ կարևոր ունակություն՝ լեզվական ճկունություն:

Իհարկե, այս տիպի աշխատանքներն սկսվում են նախ և առաջ բառային հոմանիշությունից: Այսպես՝

Ո՛ր բառերը մոտ կամ նույն իմաստն ունեն.

օրինակ՝ քաջ-անվախ

սիրուն, ուրախ, լուսին, մեծ, արև, լուսամուտ, սպիտակ, աքաղաղ, առավոտ

գեղեցիկ, խոշոր, ճերմակ, աքլոր, պատուհան, կվարթ, արեգակ, լուսնյակ, լուսաբաց

Այս վարժություններում աշակերտը պետք է ընտրի բառերից մեկը: Ակնհայտ է, որ ինչքան էլ իմաստով մոտ են այս բառերը՝ հոմանիշներ են, այնուամենայնիվ, նրանք ունեն իմաստային նուրբ տարբերակումներ, լիովին փոխարինելի չեն և միշտ չէ, որ կարող են իրար փոխարեն գործածվել: Այս վարժություններում ընտրված են հենց այդպիսի հոմանիշներ, որոնք իրար փոխարինել չեն կարող:

Բառերն ընտրի՛ր և լրացրո՛ւ նախադասությունները:

Ես ամեն օր հեռուստացույց եմ ....(տեսնում, նկատում, նայում):

Երբ բակից եկա, շորերս շատ ..... էին (հատակ, ջինջ, մաքուր, վճիտ, պարզ, փուլալ):

Մեր ուսուցչուհին շատ ..... էր խոսում (գեղեցիկ, սիրունիկ, չքնաղ):

Դու խելոք չես, շատ .....ես (անպիտան, չար, վատ, դաժան)

Բառերից մեկն ընտրի՛ր և նախադասությունը լրացրո՛ւ.

Փոքրիկը հանգստացած ակնոց կաթ ..... (խմել, ըմպել):

Երևում էր, որ մարդը բավականին ժամանակ հացի երես չէր տեսել. վրա ընկավ ուտելիքին և մեկը մյուսի ետևից արագ ..... ամբողջը (ուտել, խժռել):

Ինչո՞ւ այդ բառն ընտրեցիր, պատճառաբանի՛ր:

Այս տիպի վարժություններում աշակերտը փորձելու է պատճառաբանել իր ընտրությունը: Կլինեն աշակերտներ, որոնք կտեսնեն, որ բառի ընտրությունը կապվում է նախադասության իմաստի, նրա արտահայտած ընդհանուր վերաբերմունքի հետ:

Բառային հոմանիշությունից բացի ներկայացված է դարձվածքային հոմանիշությունը: Սա այնքան էլ հեշտ աշխատանքներից չէ: Որպեսզի աշակերտը կարողանա դարձվածքը հոմանիշով փոխարինել, պետք է հասկանա և՛ մեկ դարձվածքի իմաստը, և՛ մյուս: Կան նաև վարժություններ, որտեղ դարձվածքը փոխարինվում է այլ հոմանիշ բառով կամ արտահայտությամբ: Այսպիսի վարժությունների նպատակը ոչ միայն հոմանիշների հետ աշխատանքն է, այլև անուղղակի կերպով ոճական տարբերություններ ցույց տալը, որը հետագայում, երբ երեխան արդեն կկարողանա ոճական տարբերություններ զգալ, կկարգավորվի:

Բերենք մի քանի օրինակ.

Ընդգծված բառակապակցությունները փոխարինի՛ր տրվածով.

***Մի ժամանակ** մեր աշխարհում մի վաճառական է լինում: Էս վաճառականը **մի շատ գեղեցիկ** աղջիկ է ունենում, **հեքիաթային գեղեցկության տեր:** Հայրը **շատ-շատ է սիրում** աղջկան: **Մի օր** ՝օտարություն գնալիս, հայրը հարցնում է.*

*- **Ի՞նչ** ես ուզում՝ **բերեմ քեզ համար:***

Աղջիկն էլ երկար չմտածեց, թե՝ եղեմական ծաղիկն եմ ուզում:

հուրի-փերի,
օրերից մի օր
աշխարհի չափ սիրում է
ժուկով-ժամանակով
Է նքան սիրուն, որ արևին ասում է՝ դու դուրս մի՛ արի, ես դուրս գամ
սիրտդ ի՞նչ է ուզում
առանց երկար-բարակ մտածելու

Ընդգծված բառակապակցությունները որոնցո՞վ կփոխարինես.

*Վագրի անունը լսելուն պես Նապարի **սիրտը փորն է ընկնում:** **Ուզում է դուրս պրծնել,** փախչել իրենց տուն: Կանգնածներն էլ կարծում են, թե իրեն պատեպատ է տալիս, որ գնա վագրին ապանի: Բերում են, կենդր **դեմ են տալիս,** որ առանց կենդրի չգնա: Նապարը կենդրը վերցնում է ու **ջուն չէն անտառում առնում:** Անտառում մի ծառի է բարձրանում, վրան տապ անում, որ ո՛չ ինքը վագրին հանդիպի, ո՛չ վագրն իրեն:*

թաքնվում
շատ է վախենում
անտառում է իրեն ապահով կզգա
աչքի առաջ են դնում
վտանգից ազատվել
այս ու այն կողմ է գցում

Երբ աշակերտը ավելի վարժ է դառնում տրված դարձվածքը տրված հոմանիշ-համարժեքով փոխարինելու մեջ, նրան առաջարկում ենք այլ աշխատանք: Առաջարկվում են դարձվածքներ՝ հնարավորին չափ ծանոթ և հաճախակի գործածվող, աշակերտը ինքն է գտնում դրանց հոմանիշը:

Մեկ բառով գրի՛ր. այսպես՝
լույսը բացվել - լուսանալ
սուտ խոսել -
մութն ընկնել -
կռիվ անել -
հարց տալ -
ձայն տալ -
Դասարանում կարդացե՛ք: Բոլորդ նույն բառե՛րն եք գրել:

Բառային և դարձվածքային հոմանիշության այս բոլոր աշխատանքներից հետո անցնում ենք մտքի հոմանիշությանը՝ արտահայտված միտքը այլ ձևով՝ հոմանիշ, համարժեք մտքով արտահայտելուն:

Բերենք օրինակներ՝

Ո՛չ դու ես ինձ պատմել, ո՛չ քույրդ նախադասության միտքը ո՛ր նախադասությունն է արտահայտում.
Դու չես ինձ պատմել, քույրդ է պատմել:
Դու ու քույրդ ինձ չեք պատմել:
Դու ես ինձ պատմել, քույրդ չի պատմել:
Դու ու քույրդ եք ինձ պատմել:

Նախադասությունները լրացրո՛ւ.
Ես ավելի քիչ եմ կարդում, քան դու:
Ես քեզնից .....եմ կարդում:
Դու ինձնից .....ես կարդում:
Նախադասությունները լրացրո՛ւ.
Կատուն այնքան արագ չի վազում, ինչքան նապաստակը:
Կատուն նապաստակից .....է վազում:
Նապաստակը կատվից .....է վազում:
Գայլն ավելի ուժեղ է, քան աղվեսը:
Գայլն աղվեսից .....է:
Աղվեսը գայլից .....է:

Հականիշությունը հիմնականում վերաբերում է բառերին: Ավելի հեշտ են յուրացվում ժխտական հականիշները, և այդպիսի վարժությունները ավելի շատ են երկրորդ դասարանում:

Օրինակ՝ *Մեկ բառով գրի՛ր.*
հնելը չունեցող - անխելք
համ չունեցող - անհամ
գլուխ չունեցող -
տեր չունեցող -
շնորհք չունեցող -
ջուր չունեցող -
վերջ չունեցող -
ամոթ չունեցող -

Որպեսզի աշակերտը կարողանա ճիշտ գտնել տրված բառի հականիշը, նախ պետք է շատ լավ հասկանա այդ բառը: Այս առումով ավելի դժվար են հակադրական հականիշները: Այս հարվի առնելով աշակերտին առաջարկվում են նրան լավ ծանոթ, ակտիվ բառապաշարից ընտրված բառեր: Սկզբում տրվում են վարժություններ, որտեղ կան և՛ բառերը, և՛ նրանց հականիշները: Աշակերտն ըստ տրված օրինակի ընտրում է բառերի հականիշները: Այդ աշխատանքին հաջորդում է բառին ինքնուրույն հականիշ գտնելը:

Ո՛ր բառերն ու նեն հակառակ իմաստ.
գոհ, կուրտ, ուշադիր, անհետաքրքիր, դառը, անուշադիր, բութ, հետաքրքիր, սուր, շոգ, դժգոհ, քաղցր:
Ինքդ էլ այսպիսի կոյգեր կազմի՛ր՝ սառը - տաք, լավ - վատ

հիվանդ-	*բարձր-*
գեղեցիկ-	*կարճ-*
աշխատասեր-	*խելացի-*
արագ-	*տխուր-*

Դասարանում բարձրաձայն կարդացե՛ք: Բոլո՛րդ եք նույն բառերը գրել:

Գրի՛ր ընդգծված բառերին իմաստով հակառակ բառեր:
Մի եղբայրը օր-օրի հարստանում էր, իսկ մյուսը.....:
Ձագ ավորը մեծ որպես թողեց ամեն ինչ, իսկ փոքրին .....:
Արևն ամպերի ետևից մեկ երևում էր, մեկ .....:
Շողոքորթ կատուն օրեցօր չարանում էր, իսկ շունը .....:
Ես խոզապիքներս հավաքում եմ, դու .....տնով մեկ:
Այստեղ շատ խոնավ է, ...տեղում նստի՛ր:

Սիա հականիշության մեկ այլ օրինակ ևս.

Փորձի՛ր շարունակել այսպես.

«Խելոքն ու հիմարը» հեքիաթի մի եղբայրը խելոք էր, իսկ մյուսը հիմար էր:

Կրակը տաք է, իսկ .....

Հողը մոտ է, իսկ .....

Արջն ուժեղ է, իսկ .....

Աղվեսը խորամանկ է, իսկ .....

Մրջյունը աշխատասեր է, իսկ .....

Այստեղ, ինչպես տեսնում ենք, ոչ միայն բառերի հականիշություն է, այլև ամբողջական մտքերի:

Իմաստաբանություն

Վարժությունների մյուս խումբը վերաբերում է բառիմաստին: Մի դեպքում ներկայացվում է բառիմաստը, որքան հնարավոր է մանրամասնորեն պատմվում է բառի մասին, բացահայտվում է նրա իմաստը, իսկ աշակերտը, ըստ նրա մասին պատմածի, գուշակում է այն: Մյուս դեպքում՝ հակառակն է արվում. տրվում է բառը, աշակերտն ինքն է պատմում նրա մասին: Այս վարժությունները կատարելիս պետք է հետևել, որ որքան հնարավոր է դիպուկ բնութագրվի բառը, տեսանելի ներկայացվի այն, ճիշտ դուրս բերվի իմաստը: Այս վարժություններն ուղղված են բառիմաստի որքան հնարավոր է խոր, հնարավորին չափ ամբողջական և բազմակողմանի ընկալմանը:

Օրինակներ՝

Բառերը գտի՛ր և վանդակները լրացրո՛ւ.

1. Փոքրիկ, երկարականջ, վախկոտ կենդանի:

2. Մեծ, երկարականջ կենդանի, որը պատմություններում դրմբռ է ու իրասածի:

3. Փոքրիկ կենդանի, որը չի սիրում կատվին, որովհետև կատուն իրեն ուտում է:

4. Կենդանի, որին ծուռթաթ են ասում:

5. Տարվա եղանակ, որի մասին բանաստեղծն ասում է.

«Է՛յ կանաչ ախպեր,
Է՛յ ճանաչ ախպեր,
Արի՛, քեզ հետ բեր արևի ջողեր,
Բեր անուշահոտ
Ծիլ, ծաղիկ ու խոտ...»:

6. Հեքիաթի հերոս, որը մի բան տալիս է, հետո փոշմանում, ետ է ուզում:

Մեկ բառով գրի՛ր.

մարդ, որը կոշիկ է կարում -
մարդ, որը ձուկ է որսում -
մարդ, որը որս է անում-
անյակ, որտեղ քնում են-
անյակ, որտեղ ճաշում են-
աշխատել չսիրող -
սուտ խոսող-

Բացատրություն ները գրի՛ր.

բժիշկ -	*դպրոց-*
ուսուցիչ -	*քաղաք-*

Բացատրություն ները գրի՛ր.

կարոտել	*հայելի*
կանաչ	*կատակ*
երգել	*կարկուտ*

Ընդհանուր և մասնավոր անուններ

Այս վարժություններն ուղղված են ընդհանուրի մեջ մասնավորը տեսնելուն և մասնավորից դեպի ընդհանուրը գնալուն:

Բառերը տեղավորի՛ր երեք խմբերում՝ թռչուն, մարդ, ծառ.

արագիլ, տանձենի, արծիվ, գյուղացի, բարդի, բու, աղաղակող, խնձորենի, վարորդ, ընկուզենի, ծիտ, ուսուցիչ, ուռենի, ագռավ, երեխա, բակե, բժիշկ:

Այդ խմբերում նոր բառեր ավելացնել կարո՞ղ ես: Փորձի՛ր:

Բառերը տեղավորի՛ր այս խմբերում՝

միրգ բանջարեղեն ծաղիկ

խնձոր, կաղամբ, նուռ, վարդ, գազար, տանձ, բազուկ, կակաչ, սոխ, խաղող, սխտոր, կարտոֆիլ, մանուշակ, դդմիկ, մեխակ, լոբի, շուշան, ազոր, վարունգ, ձնծաղիկ:

Փորձի՛ր նոր բառեր ավելացնել:

Ներկայացնենք լեզվաբանական մյուս բաժիններից ընդգրկված նյութ՝ մի քանի օրինակներով:

Զ ե ա բ ա ն ու թ յ ու ն
Գ ո յ ա կ ա ն ա ն ու ն

Թանձրացական և վերացական գոյականներ

Բառերը տեղավորի՛ր այս երկու խմբում՝
ա) բաներ, որոնց կարող ես ձեռք տալ
բ) բաներ, որոնց տեսնել, ձեռք տալ, շոշափել չես կարող
ծառ, ընկերություն, կարմանք, մայրիկ, սեղան, ուրախություն, քար, վախկոտություն,ծաղիկ, երազ, նկար, ծիծաղ:

Հատուկ և հասարակ գոյականներ

Ձեր դասարանի երեխաների անունները գրեցի՛ր: Սարե՛ն:
Տե՛ս՝ ընկերդ բոլոր անունները մեծատառո՞վ գրեց: Շա՛տ լավ է:
Գրի՛ր աղջիկների անուններ, որոնք նաև ծաղկի անուն են:
Մարդկանց անունները մեծատառով սկսեցի՛ր: Լա՛վ է:
Բոլոր ուսուցիչների անուններն ու ազգանունները գրի՛ր:
Գրի՛ր, թե նրանց ինչպե՞ս ես դիմում:
Սարե՛ն, չէա մոռացել, որ անուններն ու ազգանունները մեծատառով են սկսվում:

Անձ և իր

Բառերը տեղավորի՛ր այս երկու խմբում.
ա) բաներ, որոնք շունչ ունեն, շնչում են, շնչավոր են,
բ) բաներ, որոնք շունչ չունեն, չեն շնչում, շնչավոր չեն:
տղա, նատարան, քույրիկ, բաժակ, տետր, ուսուցիչ, շնիկ, ժպիտ, մուկ, հեռախոս, բարեկամություն, տատիկ:

Գոյականի թիվը

Պատմությունը կարդա՛:

Շատ պատմություններ կան օձի մասին: *Ասում են՝ օձը կախարդիչ հայացք ունի, որից քարանում են կենդանիները: Բանն այն է, որ օձի աչքերը կոպեր չունեն, ծածկված են թափանցիկ թաղանթով: Այդ պատճառով էլ նայում է անթարթ, անընդհատ: Ժամանակ առ ժամանակ օձը մաշկափոխվում է, դուրս է գալիս հին մաշկից: Բայց այդ կիսաթափանցիկ մաշկը չպետք է շփոթել օձի կաշվի հետ: Կաշին մնում է և շատ ավելի պայծառ է փայլում: Մաշկափոխությունից հետո օձն արտակարգ գեղեցկանում է:*

Այս պատմությունը օձերի՛ մասին է. այսպե՛ս պատմիր.

Շատ պատմություններ կան օձերի մասին: *Ասում են՝ օձերը կախարդիչ հայացք ունեն, որից քարանում .....կենդանիները:*

Բանն այն է, որ .....աչքերը կոպեր չունեն, ծածկված են թափանցիկ թաղանթով: Այդ պատճառով էլ նայում ... անթարթ, անընդհատ: Ժամանակ առ ժամանակ ..... մաշկափոխվում ...., դուրս ..... գալիս հին մաշկից: Բայց այդ կիսաթափանցիկ մաշկը չպետք է շփոթել ..... կաշվի հետ: Կաշին մնում է և շատ ավելի պայծառ է փայլում: Մաշկափոխությունից հետո ....արտակարգ գեղեցկանում .....:

Գրի՛ր այն փոփոխությունները, որ կատարվեցին.
օրինակ՝ օձ-օձեր, ունի-ունեն:

Ա ծ ա կ ա ն ա ն ու ն
Որակական ածականի համեմատության աստիճանները

Կիսատ նախադասությունները լրացրո՛ւ:
Մեղուն փոքր է:
..... մեղվից փոքր է:
Բայց ամենափոքրը .....է:

Աղվեսը խորամանկ է:
..... ավելի խորամանկ է, քան աղվեսը:
Բայց ամենախորամանկը .....է:
Ի՞նչն է ամենաբարձրը.
Ծառը բարձր է:
Շենքն ավելի բարձր է:
Սարը շենքից բարձր է:
Ո՞րն է սրանցից ամենաբարձրը:
Ամենաբարձրը ..... է:

Ի՞նչն է աշխարհում՝
ամենաքաղցրը
Աշխարհում ամենաքաղցրը .....է:
ամենամեծը
Աշխարհում ամենամեծը .....է:
ամենահետաքրքիրը
ամենավատը
ամենաարագը
ամենաչարը
ամենափոքրը
ամենաատելը
ամենաչարաճճին
Այս շարքը շարունակի՛ր:

Անձնական դերանուն

Նախադասությունները լրացրո՛ւ այս բառերով.
ես, ինքս, դու, ինքդ, նա, ինքը
Սա ..... եմ՝ա՛յ այսպիսի երկար ականջներով:
Սա իմ տունն է, ես ..... եմ սարքել:
Սա .....ես՝ա՛յ այսպիսի երկա՛ր պոչ ունես և շա՛տ խորամանկ ես:
Սրանք քո կարճ ոտքերն են: Դու .....էլ գիտես, թե ինչքա՛ն վտանգավոր են:
Սա ....է: Տե՛ս, ի՛նչ սիրունիկն է:
Նա .....էլ գիտի այդ մասին:

Նախադասությունները լրացրո՛ւ այս բառերով.
մենք, ինքներս, դուք, ինքներդ, նրանք, իրենք:
..... այսպիսին ենք՝տեսե՛ք:
Սա մենք .....ենք կառուցել: Գեղեցի՛կ է:
.....ա՛յ այսպիսի կարմիր այտեր ունեք:
Դուք .....էլ գիտեք, թե որքան կլորիկ եք, ա՛յ այսպիսին:
.....են կերել մեր հացահատիկը: Ա՛յ այսպիսին են այդ շատակները:
Իսկ նրանք ..... վախենում են ա՛յ այս կենդանուց:

Թվական անուն

Գիտե՞ք, որ...

Կրիաների երկու հարյուր տեսակ է հայտնի: Կան փղի չափ մեծ կրիաներ, որոնց քաշը հասնում է չորս հարյուր կիլոգրամի:

Աշխարհի ամենահին կենդանին կապույտ կետն է: Նրա երկարությունը երեսուն մետր է, քաշը՝ մինչև հարյուր հիսուն տոննա: Նա հիսուն փղից ծանր է: Կետի նորածին ձագն ունենում է վեցից ութ մետր երկարություն և ամեն կերակրման ժամանակ ուտում է հարյուր լիտր կաթ:

Ուշադրություն դարձրո՛ւ ընդգծված բառերի գրությանը:

Հարցերին պատասխանի՛ր.
Ո՞ր թվականին ես ծնվել:
Քանի՞ տարեկան ես:
Ո՞ր թվականին ես դպրոց եկել:
Դպրոցը ո՞ր թվականին ես ավարտելու:
Ո՞ր թվականին ես լինելու քսան տարեկան:

Ո՞ր թվականին ես լինելու հարյուր տարեկան:
Մեկից մինչև ինսուն ինը թվերի անունները միասին գրեցի՞ր:
Այս թվերի անուններն էլ առանձին գրեցի՞ր: Լա՛վ է:

Հարցերին պատասխանի՛ր.
Տարվա ո՞ր երորդ ամսին ես ծնվել:
Ո՞ր երորդ դասարանում ես սովորում:
Անցյալ տարի ո՞ր երորդ դասարանում էիր սովորում:
Հաջորդ տարի ո՞ր երորդ դասարանում ես սովորելու:
Ո՞ր երորդ նստարանին ես նստում:
Ո՞ր երորդ նստարանին է նստում ձեր դասարանի .....:
Առաջին բառն օգտագործեցի՞ր:
Նկատեցի՞ր այս թվերի անուններն ինչպես ստացվեցին:
Փորձի՛ր գրել այդ մանիկների անունները:

Բայ

Բայի ժամանակները

Ես հիմա պատմում եմ այսպես.

Ես հեծանիվ ունեմ: Հայրիկս է ինձ սովորեցնում հեծանիվ վարել: Շատ արագ եմ վարում հեծանիվս: Ընկերս էլ հեծանիվ ունի: Ես ու ընկերս հեծանիվներով մրցում ենք: Ես ավելի արագ եմ վարում, քան ընկերս:

Այս պատմությունը եղել է անցած տարի: Պատմում եմ այսպես.

Անցած տարի ես հեծանիվ ունեի:
Եկող տարվա մասին պատմում եմ այսպես.
Եկող տարի ես հեծանիվ եմ ունենալու:

Բայի ժամանակաձևերի իմաստային տարբերությունները

Ո՞ր դեպքում ես տեսել ծառի կտրելը.
ա) Բակի ծառը կտրել են:
բ) Բակի ծառը կտրեցին:

Ո՞ր դեպքում ես ներկա եղել բաժակի կոտրվելուն.
ա) Բաժակը կոտրվել է:
բ) Բաժակը կոտրվեց:

Պատմի՛ր որպես ականատես.
Արևիկը ծննդյան օրը շատ գեղեցիկ կգեստ էր նվեր ստացել:

Դա նրան տատիկն էր նվիրել: Մայրիկը գեղեցիկ հերակալ էր նվիրել: Հայրիկը նվիրել էր փոքրիկ ժամացույց: Իսկ եղբայրը՝ Վահեն, համբուրել էր քույրիկի այտը և ծնունդն այդպես էր շնորհավորել:

Այնպես պատմի՛ր, որ կգայվի՝ դու այնտեղ չես եղել:

Այս ձմեռ Հայկն առաջին անգամ եղավ կրկեսում: Նրան բոլորից շատ դուր էին գալիս կրկեսի լուսերն ու ծաղրածուն: Լուսերը սահում էին դահլիճով մեկ, իսկ Հայկը փորձում էր բռնել դրանք: Ծաղրածուի վրա բա՜ռձր-բարձր կչկչում էր:

Համապատասխան բառը տեղադրի՛ր.

Մեր գյուղը չորս կողմից ..... լեռներով:

կշրջապատվի, շրջապատվելու է, շրջապատված է, շրջապատվեց, շրջապատվում է:

Ձ ա յ ն ա ր կ ու թ յ ու ն

Կարո՞ղ ես շարունակել: Փորձի՛ր:
Սիսեռները խոհանոցում չրխկում են՝ չրը՛խկ-չրը՛խկ:
Ամբողջ օրը փայտփորիկը թրխկացնում էր՝ թրը՛խկ հա թրը՛խկ:
Հեռախոսը կնգում էր՝
Մեղուները բզկում են՝
Ճանճերը տզկում են՝

Նախադասությունները շարունակի՛ր այսպես՝
Ձյունը ճռռում է՝ ճը՛ռռ-ճը՛ռռ:
Տերևները խշշում են՝
Քամին սուլում է՝
Թեյնիկը թշշում է՝
Առվակը քչքչում է՝

Այստեղ ամեն ինչ խառնվել է, ճշտի՛ր, լա՛վ:
Ջո՛ւ-ջո՛ւ-ջո՛ւ, հասե՛ք, հրդեհ է ընկել տունը:
Փիշի՛-փիշի՛, ինչո՛ւ ես ծառը կտրում:
Հե՛յ, ամբողջ նկարածս փչացավ:
Սփսո՛ւս, եկեք կուտ տամ ձեզ:
Հայ հարա՛յ, արի քեզ մածուն տամ:

Նախադասություններն այսպե՛ս լրացրու.
Շունը հաչում է՝ հա՛ֆ-հա՛ֆ:
Ծաղկած այգում լսվում էր մեղուների ձայնը՝.....:
Սենյակում տզկում էր մի ճանճ՝.....:
Ի՞նչ է ուկում այս կատուն, անընդհատ մլավում է՝.....:
Լուսաբացին աքաղաղը կանչում է՝.....:
Միտը ծառին ծլվլում է՝.....:

Շ ա ր ա հ յ ու ս ու թ յ ու ն

Նախադասություն

Շատ ենք կարևորել նաև շարադրություններն ու տեքստային աշխատանքները: Երեխային ուսուցանվում է մտքերը կապակցված շարադրելու տեխնիկան: Տրվում են նաև շարադրությունների վերնագրեր, որոնք կարող են խթանել երեխայի երևակայությունը: Տեքստային աշխատանքների համար ընտրված են ոչ գեղարվեստական նյութեր: Ֆանտաստիկ, գիտահանրամատչելի, հետաքրքրաշարժ նյութերը կհետաքրքրեն երեխային և կտրամադրեն կատարելու այն լեզվական աշխատանքները, որոնք նախատեսվում են:

Վարժությունների մի մեծ խումբ ուղղված է գրավոր խոսքի մշակմանը: Գրագետ գրավոր խոսքը խիստ կարևորում ենք, և այս գիրք-տետրերն ունեն այդ ուղղվածությունը: Ի՞նչ ենք հասկանում գրագետ խոսք ասելով: Մենք լեզվական միջոցներն օգտագործում ենք կարգապահելու երեխայի տրամաբանությունը, վերլուծելու և համադրելու կարողությունը և իր միտքը առանց խճողելու, ճշգրիտ, հստակ, հասկանալի արտահայտելը: Սա ենք համարում գրագիտություն:

Գիրք-տետրերում վարժություններն ու առաջադրանքները ներկայացված են *պարզից բարդ* սկզբունքով:

Խոսքի մշակումը սկսվում է մեկ նախադասության հստ տարվող աշխատանքից և հասնում մինչև որևէ թեմայի ամբողջական շարադրանքը:

Աշխատանքն սկսվում է համառոտ նախադասության ընդարձակումից, ընդարձակ նախադասության համառոտումից մինչև համառոտ տեքստի ընդարձակում և ընդարձակ տեքստի համառոտում:

Երկինքը կապույտ է նախադասությանը բառեր ավելացրո՛ւ.
ա) Մի բառ ավելացրո՛ւ:
բ) Հիմա մի բառ էլ ավելացրո՛ւ:
գ) Մի բառ էլ փորձի՛ր ավելացնել:

Գրի՛ր հարցերի պատասխանները.
Ինչպիսի՞ նապաստակն է ցատկոտում:
....., ...նապաստակն է ցատկոտում:
Նապաստակը ե՞րբ է ցատկոտում:
Նապաստակը .....է ցատկոտում:
Նապաստակը ո՞ւմ հետ է ցատկոտում:

Նապաստակը .....է կատկտում:
Նապաստակը որտե՞ղ է կատկտում:
Նապաստակը ....., ... է կատկտում:
Նապաստակը ինչպե՞ս է կատկտում:
Նապաստակը ....., ... կատկտում է:
Գտածդ բառերով նախադասություն ընդարձակի՛ր.
...., ... նապաստակը ...., ..., ... կատկտում է:

Նախադասությունիդ բառեր հանի՛ր և երկու բառ թո՛ղ այնպես, որ իմանանք՝ ո՛վ ի՛նչ էր անում:

Կարմիր, գեղեցիկ գլխարկով աղջիկը անտառում միայնակ պրոնում էր:

ա) Մի բառ հանի՛ր:
բ) Մի բառ էլ հանի՛ր:
գ) Փորձիր մի բառ էլ հանել:
դ) Կարո՞ղ ես մի բառ էլ հանել:
ե) Մի բառ էլ հանի՛ր:
Ստացվե՞ց՝ ո՛վ ի՛նչ էր անում:
Գրի՛ր հարցերի պատասխանները.

Այսպիսի աշխատանքներին հաջորդում են տեքստային աշխատանքները:

Նախադասությունները լրացրո՛ւ հնարավորին չափ շատ բառերով.

Անձրևը կտրվել է: Երկինքը մաքուր է: Արևը փայլում է: Օրը տաք է: Բակը գեղեցիկ է: Ծառերը ծաղկել են: Ծաղիկները բացվել են: Բակը կանաչել է: Երեխաները աղմկում են: Տատիկները գործում են: Մայրիկները զրուցում են: Կատուն խաղում է: Շունը հաչում է: Երեկո է: Հայրիկները վերադառնում են: Իջնում է գիշերը: Բակը խաղաղվում է:

Պատմությունը կարճ, համառոտ պատմի՛ր՝ նախադասություններից բառեր հանելով.

Գրքերից ու հեռուստացույցից մեզ շատ լավ ծանոթ Աֆրիկայում մի շատ հետաքրքիր ու տարօրինակ, ոչ շատ մեծ լիճ կա: Այդ կարմանալի ու ոչ սովորական լճում ո՛չ լողացող ձուկ կա, ո՛չ կոկոցող գորտ կա, ո՛չ էլ կանաչ ու տարբեր տեսակի խոտեր կան: Հիմա հետաքրքրված ու կարմանալով կասեք՝ իսկ ի՛նչ կա: Չթաքցնեմ ու ասեմ՝ կապույտ գույնի և ամենասովորական թանաք է... Հա՛, հա՛, ճիշտ եմ ասում՝ իսկական թանաք, որով բոլորն իրենց ուզածը գրում են: Ինչքան ուզում ես՝ սրտիդ ուզածի չափ, վերցրո՛ւ, խելքիդ փչածի չափ գրի՛ր, մտքովդ անցածի չափ ևգրի՛ր, մայրիկն էլ հո չի ասի. «Այդ գրչով սուտ ես մի՛ նկարիր, թանաքը շատ ջուր կվերջանա»:

Կարդացե՛ք: Փորձի՛ր գրածդ ավելի սեղմել:

Տեքստի համառոտմանն օգնում են այսպիսի հուշող-օգնող վարժությունները:

Պատմությունները կարդա՛:

Նմանություններն ընդգծի՛ր կարմիր գույնով, տարբերությունները՝ կանաչ:

Նապաստակներն ու գորտերը

Նապաստակները գլխի ընկան, որ վախկոտ են , որոշեցին խեղդվել: Համաքվեցին, մոտեցան լճափին: Գորտերը լսեցին թփթփոցը, ցատկեցին ջուրը: Նապաստակները տեսան: Մեկն ասաց.

- Ինչո՞ւ խեղդվենք, ավելի վախկոտներն էլ կան:

Նապաստակներն ու գորտերը

Նապաստակները երկար, շատ երկար միտք անելուց հետո հանկարծ գլխի ընկան, որ իրենք իրենց ամբողջ կեղով անչափ վախկոտ են և որոշեցին այդպես է՛լ չապրել, այլ գնալ, լցվել մոտակա խոր լիճն ու խեղդվել: Որոշեցին, շատ արագ համաքվեցին, համարձակ մոտեցան ավազոտ լճափին: Լճից դուրս եկած գորտերը հենց որ լսեցին արագ մոտեցող նապաստակների ոտքերի թփթփոցը, անմիջապես, առանց վայրկյան իսկ սպասելու, ցատկեցին ջուրը, լճի ամենախոր տեղը: Այդ ամենը նապաստակները տեսան: Նրանցից մեկը, կանգնեցնելով ընկերներին, ասաց.

- Ինչո՞ւ իսկույն տեղը խեղդվենք, եթե մեզնից ավելի վախկոտներն էլ կան աշխարհում:

Գրավոր խոսքի մշակման հաջորդ քայլը լինում է տեքստը նախադասություններով ընդարձակել ուսուցանելը, որը նույնպես սկսվում է օգնող վարժություններով:

Այսպես օրինակ՝

Պատմությունն ընդարձակի՛ր՝ նախադասություններ ավելացնելով:

- Ո՛վ է սիրում երաժշտություն:

Մի քանի աշակերտ ձեռք են բարձրացնում:

- Հիանալի՛ է: Իսկ հիմա եկե՛ք և այս դաշնամուրը փոխադրե՛ք երրորդ հարկ:

Օգնեմ քեզ.

ա) նկարագրի՛ր այն տեղը, որտեղ տեղի էր ունենում խոսակցությունը.

բ) ո՛վ դիմեց աշակերտներին. նկարագրի՛ր նրան.

գ) ինչպե՞ս վերաբերվեցին այդ խոսքերին աշակերտները:

Այս տիպի վարժություններին արդեն հաջորդում են հետևյալ վարժությունները.

Պատմությունն ընդարձակի՛ր և՛ նախադասություններն ընդարձակելով, և՛ նոր նախադասություններ ավելացնելով:

Մի որսորդ առյուծի հետք էր փնտրում: Նա փայտահատին հարցրեց, թե չի՛ տեսել առյուծի հետքը կամ որջը: Փայտահատը պատասխանեց.

- Ես քեզ հենց իրեն՝ առյուծին կուշտ կտամ:

Որսորդը վախից գունատվեց և ատամները չխկչխկացնելով շշնջաց.

- Չէ՛, ինձ միայն հետքն է պետք, ոչ թե առյուծը:

Ներկայացնենք գրավոր խոսքի մշակմանն ուղղված վարժությունների մյուս խումբը: Աշակերտի ուշադրությունն ենք հրավիրում բառերի շարադասության կարևորության վրա, թե ինչպես կարող է իմաստ փոխվել՝ կախված բառերի շարադասությունից:

Գայլը նայեց արջին ու աղվեսին:

Զարմացած *բառն ավելացրո՛ւ այնպես, որ՝*

ա) գայլը լինի զարմացած,

բ) արջը լինի զարմացած,

գ) աղվեսը լինի զարմացած,

դ) նայելը լինի զարմացած:

Ձմեռ պապը տունածառի հանդեսին նվերներ բերեց:

Նախադասությանը ***երկար սպասված ու ցանկալի****-ն այնպես ավելացրո՛ւ, որ՝*

ա) Ձմեռ պապը լինի երկար սպասված ու ցանկալի,

բ) տունածառը լինի երկար սպասված ու ցանկալի,

գ) հանդեսը լինի երկար սպասված ու ցանկալի,

դ) նվերները լինեն երկար սպասված ու ցանկալի:

Մտքերի տրամաբանական շարադրանքին է ուղղված վարժությունների հետևյալ խումբը.

Երկու պատմությունները խառնվել են: Օգնի՛ր բաժանելու: Ձմեռ է:

Արդեն դրսում շատ շոգ է:

Գյուղը ծածկվել է փափուկ ու սպիտակ ձյունով: Այս եղանակին երեխաները սիրում են լողանալ գյուղի փոքրիկ գետում:

Բակերում հայտնվել են ձնե մարդիկ:

Նրանք լողում են ու պառկում տաք ավազների վրա: Լսվում է ձնագնդիկ խաղացող երեխաների աղմուկ-աղաղակը:

Այնպես լա՛վ է ամռանը գետափին:

Փորձի՛ր այս նախադասություններն այնպես դասավորել, որ պատմություն ստանաս.

Ձորում է գտնվում ու չորս բոլորը սարեր են:

Ամբողջ ամառ լողում ենք այդ գետում:

Ձորում փոքրիկ գետ կա:

Գիտե՛ք՝ ի՛նչ գեղեցիկ է մեր գյուղը:

Գիրք-տետրերում կան նաև շարադրության վերնագրեր: Նկարագրական և բնութագրական շարադրությունները ուսուցանվում են. տրվում են հարցեր, որոնց պատասխանում է աշակերտը: Ուսուցիչը պետք է հետևի, որ հարցերին պատասխանելուց հետո աշակերտը նաև մտածի այդ պատասխանները իրար հետ կապակցելու և ամբողջական, միասնական շարադրանք ստանալու մասին: Նկարագրական շարադրություններում աշակերտը պետք է աշխատի ամենայն մանրամասնությամբ պատմել նկարը: Այստեղ կարևորվում են երեխայի դիտողունակությունն ու տեսածը մանրամասնորեն շարադրելու կարողությունը:

Նկարը պատմի՛ր.

Ի՛նչ սենյակ է սա (ճաշասենյա՞կ, ննջասենյա՞կ, աշխատասենյա՞կ, մանկակա՞ն սենյակ, թե՞ մի ուրիշ սենյակ): Ինչո՞ւ ես այդպես կարծում:

Ի՛նչ կա սենյակում (պատի վրայի քարտե՞զն էլ նկատեցիր):

Պատմի՛ր այս սենյակի տիրոջ մասին.

տղա՞ է, թե՞ աղջիկ

քանի՞ տարեկան է

ինչո՞վ է սիրում զբաղվել

ինչպիսի՞ բնավորություն ունի:

Պատմի՛ր քո մասին (բնութագրի՛ր քեզ)

ա) Ի՛նչ բնավորության գծեր ունես (աշխատասե՞ր ես, թե՞ ծույլ, մաքրասե՞ր ես, թե՞ փնթի, կոմարա՞ր ես, թե՞ խաղաղասեր և այլն):

բ) Քեզ քո բնավորության ո՛ր գիծն է շատ դուր գալիս:

գ) Բնավորությանդ ո՛ր գիծը կուզեիր փոխել:

դ) Բնավորության ո՞ր գիծն է ամենաշատը բարկացնում մարդկանց:

ե) Ո՞ր գիծն է նրանց ամենաշատը դուր գալիս:

զ) Բնավորության այնպիսի գիծ կա՞, որը չունես, բայց շատ կուզեիր ունենալ:

է) Բնավորության այնպիսի գիծ կա՞, որ չունես և չէիր էլ ուզի ունենալ:

Շարադրությունների մյուս տեսակը ապատ շարադրություններն են, որոնց վերնագրերի տարօրինակությունն ու երբեմն նաև անսպասելիությունը պայմանավորված են նրանով, որ ուղղված են երեխաների երևակայության խթանմանը:

Օրինակներ՝

Կատուների թագավոր Մուկը
Միտ, որն այնքան էլ ծիտ չէր

Հնարագետ կապիկը

Մի ընտանիքում երեք տարեկան կապիկ էր ապրում՝ անուն Դուդու:

Տան անդամները շատ էին սիրում նրան:

Բայց մի օր էլ պարզվեց, որ Դուդուն տան անդամներից գաղտնի փող էր վերցնում, տանում էր շուկա և այդ փողով միրգ էր գնում:

Հորինի՛ր. Դուդու կապիկի արկածները

Ուսուցչի անելիքն այստեղ այն է, որ հետևի երեխայի ձևակերպած մտքի հստակությանը: Նախապատրաստական աշխատանքն այն կլինի, որ ուսուցիչը երեխային սեփական ուժերի նկատմամբ վստահություն ներշնչի , իսկ թեմատիկ առումով ցանկացած հուշում կկաղապարի երեխայի միտքը, կարգելի մտքի երևակայական հնարավոր թռիչքը:

Վարժությունների միջոցով աշակերտը գրավոր ճիշտ, հստակ, գրագետ հաղորդակցվելու հմտություններ է ձեռք բերում, որոնք հասկանալի է, որ պետք է գործածի գրավոր խոսքում: Որպեսզի երեխան գրավոր հաղորդակցվելու պահանջ ունենա՝ չձանձրանա միօրինակությունից, մենք ընդլայնել ենք աշակերտի գրավոր խոսքի օգտագործման ձևերն ու շրջանակները: Բացի շարադրություններից՝ բացիկներով աշակերտը շնորհավորում է ընկերներին, ուսուցչին, նամակներ է գրում, օրագիր պահում, գրի առնում ծնողների ասածը, ցուցանակներ գրում և այլն:

Մի քանի խոսք կետադրության մասին: Մենք կետադրությանը նույնքան լուրջ ենք մոտենում, որքան լեզվական մյուս հարցերին: Ինչքան սխալ ձևակերպումն է միտքը դարձնում անհասկանալի, նույնքան էլ կետադրական նշանի ոչ տեղին գործածումը: Այս նկատի ունենալով՝ երեխայի ուշադրությունն ի սկզբանե հրավիրում ենք կետադրական նշանների այս առանձնահատկության վրա: Երեխան պետք է կարևորի կետադրական նշանը: Բերենք մի քանի օրինակ.

Տղան խաղում էր բակում շնիկի հետ աղջիկը վախվխում էր
Վերջակետը պի՛ր այնպես, որ.
ա) տղան խաղա, բակում աղջիկը շնիկի հետ վախվխի
բ) տղան խաղա բակում, աղջիկը շնիկի հետ վախվխի
գ) տղան շնիկի հետ խաղա բակում, աղջիկը վախվխի

Բարձրաձայն կարդա՛, հարցերին պատասխանի՛ր և գրի՛ր.
Աղջիկը բարի էր, խորթ քրոջ պես չար չէր:
Խորթ քույրն ինչպիսի՞ն էր:
Աղջիկը բարի էր խորթ քրոջ պես, չար չէր:
Խորթ քույրն ինչպիսի՞ն էր:

Բարձրաձայն կարդա՛ և պատասխանի՛ր հարցերին.
Շունը վախեց Շուշանի փոքր աղջկա ետևից:
Ո՛ւմ ետևից վախեց շունը:
Շունը վախեց Շուշանի՝ փոքր աղջկա ետևից:
Ո՛ւմ ետևից վախեց շունը:

Գիրք-տետրերը նախատեսվում են աշակերտի անհատական աշխատանքի համար: Վարժություններից առաջ բացատրությունները կարող են լինել միայն կազմակերպական բնույթի: Երեխային բացատրություններ, առավել ևս պատրաստի ձևակերպումներ չեն տրվում: Կատարելով առաջադրանքը, պատասխանելով հարցերին՝ գործնական ճանապարհով նա ինքն է նկատում լեզվական երևույթը, օրինաչափությունը: Ինքնուրույն աշխատող, իր համար լեզվական հայտնագործություններ անող և ստեղծագործող երեխան ձեռք է բերում լեզվական հմտություններ, իրականում սիրապահում է լեզվին, դառնում է գրագետ:



IV ԴԱՍԱՐԱՆԻ ՄԱՅՐԵՆԻԻ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Մարգարիտ Հարությունյան

IV դասարանի ընթերցարանում ընդգրկված են գեղարվեստական բարձրարժեք նյութեր՝ հիմնականում հայ դասական գրականությունից: Դրա նպատակը երեխայի ստեղծագործական միտքն ու գեղագիտական ճաշակը կարգացնելն է:

Դասագրքի հիմնական նպատակներից մեկն էլ երեխայի մեջ կարդալու սեր, կանկություն արթնացնելն է: Հենց այդ պատճառով էլ նյութեր ընտրելիս հաշվի են առնվել երեխայի տարիքը, նրա նախասիրությունները ու հետաքրքրությունները:

Ուստի ընթերցարանում մեծ տեղ են գտել կենդանիների մասին պատմվածքներ, պատմություններ աշակերտների հասակակիցների կյանքից:

Ընթերցարանը կազմված է երեք բաժնից.

ա) գրական ընթերցանության նյութեր,

բ) «Առածանի»,

գ) բառարան:

Բացի գեղարվեստական ստեղծագործություններից՝ գրքում կան նաև վավերագրական նյութեր, որոնք բավարարում են նրա հետաքրքրությունը և նպաստում աշխարհաճանաչողությանը:

Օրինակ՝ առյուծի մասին լրացուցիչ նյութը, որտեղ պատմվում է նրան «արքայի» տիտղոս շնորհելու մասին, օգնում է երեխային ավելի լավ հասկանալու առակի իմաստը («Վիրավոր առյուծն ու կրիան» առակում):

Երեխաներն այդպիսի նյութերը կարդում են հաճույքով և է՛լ ավելի լավ ճանաչում աշխարհը:

Գրական յուրաքանչյուր ստեղծագործությանը հետևում են հարցեր և առաջադրանքներ, որոնք օգնում են աշակերտին ամբողջովին յուրացնելու նյութը, խորհելու և եզրակացություններ անելու, ինքնարտահայտման հնարավորություն են ընձեռում, նպաստում են գեղարվեստական մտածողության կարգացմանը:

Հարցերի ու առաջադրանքների հիմնական նպատակն է, որ երեխան կարողանա.

ա) մտքում կարդալ, կարդացածը հասկանալ ու վերապատմել (գրավոր կամ բանավոր),

բ) թվարկել հերոսներին, նկարագրել և բնութագրել նրանց,

գ) բանավոր և գրավոր հակադրալի արտահայտել իր մտքերը

դ) օգտվել հանրագիտարաններից և բառարաններից:

«Հարցեր և առաջադրանքներ» բաժնի նյութերը գրեթե միշտ սկսվում են բառարանային աշխատանքով:

Երեխան տեքստում գտնում է տրված բառերը կամ ինքն է դուրս գրում տեքստից անհասկանալի բառերն ու արտահայտությունները ու փորձում բացատրել (բառարանի օգնությամբ): Այս աշխատանքը կարելի է կատարել և՛ բանավոր, և՛ գրավոր: Կարելի է նաև նշել անծանոթ բառը, դասարանում բարձրաձայն կարդալ այն նախադասությունը, որտեղ գործածվում է տվյալ բառը, ապա, ըստ անհրաժեշտության, դուրս գրել և բացատրել:

Նման աշխատանքը աշակերտին մղում է վերընթերցելու նյութը, օգտվելու բառարանից և օգնում սովորելու անծանոթ բառերը:

Հաջորդը տեքստային աշխատանքն է, ինչը ներառում է, օրինակ, այսպիսի առաջադրանքներ.

Համառոտ պատմի՛ր հեքիաթը:

Հեքիաթը մասերի բաժանի՛ր և այդ մասերը վերնագրի՛ր:

Ըստ գրքում առաջարկված վերնագրերի պատմի՛ր:

Որևէ հերոսի անու նից պատմի՛ր հեքիաթը:

Կատարելով այդ առաջադրանքները՝ աշակերտն աննկատելի յուրացնում է տվյալ նյութը: Այստեղ հատկապես մեծ է ուսուցչի դերը: Նա պիտի ուշադիր հետևի աշակերտի խոսքին, օգնի նրան՝ խուսափելու ավելորդություններից, ուշադրություն դարձնի ասված յուրաքանչյուր բառին, յուրաքանչյուր կապված նախադասությանը: Նպատակահարմար է այս աշխատանքը կատարել գրավոր: Այս տեքստում աշակերտն ի մի է բերում մտքերը, դասալսում, հստակեցնում յուրաքանչյուր օգտագործված բառ:

Չպետք է խուսափել շատ աշակերտներ այս աշխատանքի մեջ ներգրավելուց: Լսելով միմյանց՝ նրանք համեմատում են իրենց գրածները (պատմածները) և տեսնում, թե ում խոսքն է ավելի հակիրճ, գեղեցիկ և համառոտ:

Ստեղծագործությունը մասերի բաժանելիս աշակերտը սովորաբար դժվարանում է, բաժանումը կատարում մեխանիկորեն: Ուսուցչի խնդիրն աշակերտին այնժեհ աստիճանական կարգացումը, դեպքերի հաջորդականությունը և փոխկապակցվածությունը ցույց տալն է, այսինքն՝ նա պետք է օգնի աշակերտին ընկալելու տվյալ նյութն առանձին մասերի մեջ: Երեխային անհրաժեշտ է անընդհատ հիշեցնել, որ մասերը պետք է լինեն ինքնուրույն, իրար հաջորդող, միմյանց լրացնող: Ստեղծագործությունը

կարելի է բաժանել թե՛ խոշոր հատվածների, թե՛ ավելի փոքր, ինքնուրույն մասերի, միայն թե աշակերտը պետք է անպայման պատճառաբանի իր կատարած բաժանումը: Դրան ուսուցիչը պետք է աչալուրջ հետևի և ժամանակ ու ջանք չխնայի:

Այս աշխատանքը կատարելուց հետո աշակերտին մնում է վերնագրել առանձնացված մասերը: Վերնագիրը պետք է լինի դիպուկ, արտահայտիչ և, ցանկալի է, կարճ:

Շատ կարևոր ու հետաքրքիր է որևէ հերոսի անունից հեքիաթը պատմելու առաջադրանքը:

Օրինակ՝ այսպես.

Ծառաբնակ մարդու անունից պատմի՛ր հեքիաթը:

Մահակը

Հնձվորներից մեկը, տուն գալով, պատահածի մասին ինչպե՞ս կպատմի կնոջը:

Չախչախ թագավորը

Թագավորի գանձապահի անունից պատմի՛ր թագավորի պալատում պատգամավորների ընդունելության մասին:

Նման առաջադրանքները նպաստում են աշակերտի երևակայության, ստեղծագործական կարողության ու տրամաբանության զարգացմանը՝ հնարավորություն տալով երեխային ընկալելու կերպարը:

Երեխան պետք է ընկալի տարբեր հերոսների խոսելու ոճերի տարբերությունը:

Հարցերի և առաջադրանքների մյուս խումբը վերաբերում է հերոսներին նկարագրելուն ու բնութագրելուն: Երեխային պետք է օգնել տարբերակելու ***նկարագիր*** և ***բնութագիր*** բառերը: Ուսուցչի խնդիրն է աշակերտին բացատրել, որ նկարագիր ասելով հասկանում ենք հերոսի արտաքինը, հագուստը, քայլվածքը..., իսկ բնութագիր ասելով՝ հերոսի բնավորությունը, խառնվածքը...

Նպատակային է սկսել հերոսներին թվարկելուց և նոր միայն անցնել նրանց նկարագրելուն ու բնութագրելուն:

Առաջադրանքների օրինակներ.

Հեքիաթի ջրաղացպանին նկարագրի՛ր:

Չախչախ թագավորը

Նկարագրի՛ր Թուխիկին:

Թուխիկը

Քեռի Թորոսին նկարագրի՛ր՝ գտնելով պատմվածքում համապատասխան հատվածները:

Թռչնորսը

Վաչագանին նկարագրի՛ր՝ հաշվի առնելով հեղինակի օգտագործած բառերն ու արտահայտությունները:

Անահիտ

Այս կարգի աշխատանքներ կատարելիս աշակերտը նորից անդրադառնում է նյութին: Նա տեքստում փնտրում, գտնում է հերոսի նկարագիրը: Աշակերտը կարող է չբավարարվել միայն տեքստի տրամադրած խոսքային հակիրճ նկարագրով: Երեխան այստեղ ինքը պետք է մտածի, երևակայի և ապա կապ տեսնի հերոսի բնավորության, ապրելակերպի, զբաղմունքի և նրա արտաքինի միջև:

Այս առաջադրանքը կատարելիս աշխատում է երեխայի երևակայությունը, հղկվում գեղարվեստական մտածողությունը և, որ պակաս կարևոր չէ, զարգանում տրամաբանությունը:

Գո՛րս գրիր եղնիկի հոգեվիճակն արտահայտող նախադասությունները:

Եղնիկը

Գտի՛ր այն հատվածը, որտեղ երևում է Վաղինակի ավիրվածությունը Վաչագանին:

Անահիտ

Գո՛րս գրիր այն բառերը, որոնք բնութագրում են քրմերին և քրմապետին:

Անահիտ

Այս առաջադրանքները կատարելիս աշակերտը տեքստում գտնում է համապատասխան հատվածները, տողերն ու բառերը և, հիմնավորելով իր տեսակետը, բնութագրում հերոսներին:

Հետևյալ կարգի հարցերը ևս օգնում են աշակերտին՝ ավելի ճիշտ, ավելի հստակ բնութագրելու հերոսներին:

Ի՞նչ վերաբերմունք ու ներ ժողովուրդը իր թագավորի և թագուհու նկատմամբ:

Անահիտ

Ի՞նչ վերաբերմունք ու ներ Էմին Ջհմի նկատմամբ: Ասածդ հաստատի՛ր համապատասխան հատվածներով:

Առաջին օրը դպրոցում

Ի՞նչ վերաբերմունք ու ներ մորաքույրը Թոմի նկատմամբ: Գտի՛ր այդ հատվածները:

Թոմ Սոյերի արկածները

Վերլուծությունը ամբողջական է դառնում նախ և առաջ հերոսի բնութագրով.

Անահիտին բնութագրի՛ր՝ հեքիաթի համապատասխան դրվագներով (տողերով) հաստատելով:

Անահիտ

Ուսուցչին բնութագրի՛ր:

Թոմ Սոյերի արկածները

Բնութագրի՛ր հորը:

Առաջին օրը դպրոցում

Նկարագրական և բնութագրական աշխատանքները հարըստացնում և ակտիվացնում են աշակերտի բառապաշարը, քանզի հերոսներին բնութագրելիս աշակերտը փնտրում, գտնում է հերոսին բնորոշող բառերը: Եվ որքան դիպուկ բառերով և մանրամասն է բնութագրում, այնքան դա բարձր է գնահատվում ուսուցչի կողմից:

Հատուկ ուշադրություն պետք է հատկացվի, որ աշակերտը կարողանա ընտրել իր առաջարկած բնորոշումներից ամենակարևորը, ամենաբնութագրողը:

Այս առումով կարևոր է հետևյալ առաջադրանքը.

Դիպուկ մեկ բառով բնութագրի՛ր հերոսին:

Աշակերտի ցանկացած պատասխանն ընդունելի է, եթե նա կարողանում է փաստերով հիմնավորել իր ասածը:

Բառապաշարի հարստացմանը նպաստում են նաև հետևյալ առաջադրանքները.

Վաչե թագավորի ապարանքը նկարագրի՛ր՝ օգտվելով ծառաստանի գեղեցկությունն ընդգծող հատվածից:

Անահիտ

Նկարագրի՛ր Հասանի տնակը՝ օգտվելով հեքիաթի համապատասխան հատվածներից:

Քեֆ անողին քեֆ չի պակսիլ

Որպեսզի նյութի յուրացումն ու ընկալումը ամբողջական և համոզիչ լինի, աշակերտի համար ոչ մի միտք, ոչ մի արտահայտություն անհասկանալի չպետք է մնա: Օրինակ.

Բացատրի՛ր՝

Քաղաքում ասելիք էր դարձել Թուխիկը:

Թուխիկը

Ինչպե՞ս ես հասկանում.

Հարստանում, անքուն կրակի տեր է դառնում փայտահատը:

Ոխտոցը բացվում է իսկույն՝ աչքդ բարին տեսնի, ամեն ինչով լիքը: Մենակ թռչնի կաթն է պակաս:

Մահակը

Աշակերտը փորձում է այս մտքերը այլ բառերով կամ արտահայտություններով բացատրել, մեկնաբանել:

Տեքստերում հանդիպում են նաև այնպիսի մտքեր, որոնք խորհելու, մտածելու, եզրահանգումներ կատարելու ցանկություն են առաջացնում:

Օրինակ.

Նա զրահամարհեց Լայոնելին՝ իբրև հիմարի, և Յուլիսիին՝ իբրև փոքրի, սակայն ողջունեց երկուսին էլ:

Այդ տղան Լայոնել-Քերոտն էր, որին թեև հարևանները հիմար էին համարում, սակայն մարդկային մի մեծ էակ էր՝ համատարիմ, բարի և վեհանձն:

Մանրամասն պատմի՛ր տղաների գողության մասին: Ո՞ր կարծիքով՝ գողությո՞ւն է տղաների արածը:

Հատված «Մարդկային կատակերգությունից»

Ուսուցիչը պետք է կարողանա դասարանում այնպիսի մթնոլորտ ապահովել, որ երեխան նախ՝ ինքնաարտահայտման ցանկություն ունենա, և ապա՝ կարողանա անկաշկանդ հաղորդել իր մտքերը: Նշանակում է՝ դասարանում դասը պետք է վերածվի հավասարների և մտերիմների զրույցի:

Արտահայտելով իր վերաբերմունքը այս կամ այն հերոսի նկատմամբ՝ աշակերտը գնահատում է ստեղծագործությունը, այսինքն՝ նա կարող է արդեն բացատրել՝ իրեն դո՞ւր է գալիս ստեղծագործությունը, թե՞ ոչ, և ինչո՞ւ.

Համոզո՞ւմ է քեզ հեքիաթի ավարտը: Ինչո՞ւ:

Փիլոսը

Համաձա՞յն ես այս պատմությանը:

Թուխիկը

Քեզ դուր եկա՞վ այս պատմվածքը: Ինչո՞ւ:

Թռչնորսը

Հեշտ է նկատել, որ աշակերտն արդեն ընդունակ է բացահայտելու ստեղծագործության գաղափարը, նրա արտահայտած իմաստը: Այդ նպատակով նրան կօգնեն նաև հետևյալ կարգի հարցերը.

Ինչո՞ւ կրիայի խոսքերը մեծ ցավ պատճառեցին առյուծին:

Վիրավոր առյուծն ու կրիան

Կարևո՞ր է պատմվածքի երկրորդ մասը: Ինչո՞ւ:

Երջանիկ խրճիթը

Ի՞նչ ես կարծում՝ հեքիաթն ամբողջական կլինե՞ր, եթե այս մասով ավարտվեր:

Անահիտ

Ինչպիսի՞ն կլիներ պատմվածքն առանց պատկերների:

Եղնիկը

Եվ արդեն դժվար չէ պատասխանել այսպիսի ընդհանուր հարցերին.

Ո՞րն է ասածի իմաստը:

Վիրավոր առյուծն ու կրիան

Ի՞նչ է իրատում այս պատմվածքը:

Ընտանի օձեր

Գտի՛ր հեքիաթի միտքն արտահայտող նախադասությունը:

Անահիտ

Ո՞րն է այս պատմվածքի գլխավոր իմաստը:

Շղնիկը

Հարկ է նշել, որ «Հարցեր և առաջադրանքներ» բաժիններում հանդիպում են նաև այսպիսի առաջադրանքներ.

Բացատրի՛ր վերնագիրը:

Քեֆ անողին քեֆ չի պակսիլ

Հորինի՛ր նոր վերնագիր այս հեքիաթի համար և պատճառաբանի՛ր:

Փիլոսը

Մտածի՛ր նոր վերնագիր այս պատմվածքի համար:

Երջանիկ խրճիթը

Պատահական չէ, որ այս առաջադրանքները գրեթե վերջում են, որովհետև վերնագիրը բացատրելու կամ նոր վերնագիր հորինելու համար աշակերտը պետք է յուրացրած լինի նյութը: Որպեսզի ուսուցիչը ավելի համոզվի, որ աշակերտը յուրացրել է նյութը, նա կարող է առաջարկել նաև այսպիսի հարցեր.

Մեկ բառով վերնագրի՛ր:
Մեկ նախադասությամբ վերնագրի՛ր:
Համապատասխան առածով վերնագրի՛ր:

Ընթերցարանի գլխավոր նպատակներից մեկը աշակերտի գեղարվեստական մտածողության և երևակայության զարգացումն է: Դրան ուղղված առաջադրանքներից են.

Փորձի՛ր շարունակել հեքիաթը:
Փոխի՛ր հեքիաթի ավարտը.
ա) գտի՛ր ուրիշ պատիժ փայտահատի համար,
բ) այնպե՛ս արա, որ փայտահատը չպատժվի:

Մահակը

Օգնի՛ր գիտնականին... Թող նա նորից խաբի որսորդին:

Գիտնականը

Ի՞նչ էր մնացել՝ պատմեր պապը Մյունխաուզենի մասին. ինքդ հորինի՛ր:

Բարոն Մյունխաուզենի արկածները

Նույն նպատակին են ծառայում նաև ստեղծագործական շարադրությունները.

Նկարագրի՛ր դեպքեր, երբ պատգամավորները առաջին անգամ կտեսնեն ընկույզ, նարինջ...

Նուկիմ քաղաքի խելոքները

Հերոսներին տեղափոխի՛ր մեր ժամանակները և նոր հեքիաթ գրի՛ր:

Ոսկի ձկնիկ

Օրվա ո՞ր պահն ես ավելի շատ սիրում: Նկարագրի՛ր այն:

Մայրամուտ

Կան հարցեր, որոնք նպաստում են աշակերտի տրամաբանության զարգացմանը.

Ջրադացպանը ինչո՞ւ բաց թողեց աղվեսին:

Չախչախ թագավորը

Քո կարծիքով՝ ինչո՞ւ պառավը միանգամից չուզեց ծովերի թագուհի դառնալ:

Ոսկի ձկնիկ

Ի՞նչ ես կարծում՝ ինչո՞ւ չփրկվեցին թագավորն ու հարուստը:

Վախը

Քո կարծիքով՝ ինչո՞ւ հայտնի չէր Նուկիմ քաղաքի տեղը:

Նուկիմ քաղաքի խելոքները

Աշակերտի յուրաքանչյուր պատասխան պետք է ճիշտ համարել, եթե նա կարողանա այդ պատասխանը համոզիչ հիմնավորել:

Աշակերտի ուշադրությունը պետք է սևեռել նաև ստեղծագործության գեղարվեստական արժանիքներին: Այստեղ պետք է զգույշ լինել և չմոռանալ, որ դրանք բազմազան են և տարբեր՝ կախված ստեղծագործության ժանրից: Համապատասխան հարցերը երբեմն դժվար է տարբերակել վերլուծական հարցերից, քանի որ վերջիններիս պատասխանելով կարող են բացահայտվել և ստեղծագործության գրական արժանիքները (տիպականությունը, անհատականությունը, հակիրճությունը և այլն): Օրինակ.

Համեմատի՛ր Թոմի գլխը քո դպրոցի հետ (ուսուցիչներին, աշակերտներին, դասի ընթացքը):

Թոմ Սոյերի արկածները

Ինչպիսի՞ն էր միսս Բիննին: Համեմատի՛ր նրան քո ուսուցչի հետ:

Առաջին օրը դպրոցում

Գտի՛ր փոքր գեղեցիկ պատկերները:

Եղնիկը

Համեմատի՛ր տղաներին քո թաղի տղաների հետ:

Ծիրանի ծառը

Գտի՛ր այս պատմվածքի՝
ա) ամենահետաքրքիր,
բ) ամենահուզիչ,
գ) ամենազարմանալի հատվածները:

Չալանկը

Ստեղծագործության գեղարվեստական արժանիքները քննարկելիս անհրաժեշտ է աշակերտի ուշադրությունը հրավիրել պատկերավորման միջոցներին (օրինակ՝ կրկնվող տողերին, բնության պատկերներին...):

Գտի՛ր պատմվածքում կրկնվող տողերը, նրանց մեջ կատարված փոփոխությունները և բացատրի՛ր դրանց դերը պատմվածքում:

Երջանիկ խրճիթը

Բանաստեղծության մեջ գտի՛ր կրկնվող տողերը. ո՞րն է նրանց դերը:

Հովվի հրաժեշտը

Բացատրի՛ր կրկնվող տողերի նշանակությունը բանաստեղծության մեջ:

Հիշողություն

Գտնելով կրկնվող տողերը՝ աշակերտը մի քանի անգամ կարդում է տվյալ ստեղծագործությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կրկնվող տողերի վրա, և փորձում բացատրել նրանց նշանակությունը (հուզակա՞ն են դարձնում, երաժշտականությո՞ւնն են ուժեղացնում, թե՞ գլխավոր իմաստն են ընդգծում...): Յուրաքանչյուր պատասխան պետք է հիմնավորվի աշակերտի կողմից:

Իսկ այս հարցերը վերաբերում են բնության պատկերներին:

Դո՛ւրս գրիր բանաստեղծական գեղեցիկ պատկերները:

Մայրամուտ

Դո՛ւրս գրիր աջտնը պատկերող հատվածը:

Դո՛ւրս գրիր այն հատվածը, որտեղ նկարագրված է անտառը փոթորիկի ժամանակ:

Եղնիկը

Դո՛ւրս գրիր քեզ դուր եկած պատկերը:

Մշուշների շղարշի տակ...

«Առածանի» բաժնից գտնելով տվյալ նյութին համապատասխան առածները՝ աշակերտը սովորում է դրանք ճիշտ գործածել փոխաբերական իմաստով և դրանով իսկ հակիրճ արտահայտում է ստեղծագործության գաղափարը՝ արդեն լիովին այն յուրացնելով:

Որոշ նյութերում, կրկին լեզվամտածողությունը կարգավորելու նպատակով, աշակերտը դուրս է գրում նաև դարձվածքները և փորձում դրանք բացատրել: Կան և այնպիսի առաջադրանքներ, որոնք կատարելիս աշակերտը պետք է, համապատասխան բառարաններ օգտագործելով, գտնի, դուրս գրի և բացատրի այդ դարձվածքները:

Եվ վերջապես՝ աշակերտը պետք է կարողանա համեմատել տարբեր ստեղծագործությունները, բացատրել յուրաքանչյուրի արժեքները և մեկնաբանել տարբերությունները: Ուստի ընթերցարանում տեղ են գտել նաև այսպիսի հարցեր.

Համեմատի՛ր այս հատվածը «Առաջին օրը դպրոցում» պատմվածքի հետ:

Թոմ Սոյերի արկածները

Համեմատի՛ր այս առակը «Ճպուռն ու մրջյունի» հետ:

Ճպուռն ու մրջյունը

Ո՞ր պատմվածքի հետ կհամեմատես այս պատմվածքը:

Թռչնորսը

Որպես ինքնաարտահայտման մի ձև, որը հաճախ է կիրառվում ամենօրյա կյանքում, աշակերտներին առաջարկվում են նաև հետևյալ կարգի առաջադրանքները.

Նուկիմցի պատգամավորները տուն վերադառնալիս ճանապարհից հեռագիր են ուղարկում իրենց ժողովրդին. շարադրի՛ր այն:

Նուկիմ քաղաքի խելոքները

Շնորհավորական բացիկ ուղարկի՛ր Ջիմին դպրոց գնալու առթիվ:

Եթե Ջիմը գրաճանաչ լիներ, ի՞նչ կգրեր օրագրում այս երկու օրվա մասին:

Առաջին օրը դպրոցում

Խորհուրդ տուր Փիլոսին:

Փիլոսը

Թոմի և Հեքլբերիի անունից լրագիր պատրաստի՛ր (կանկալի է, որ լրագրում լինեն «Կախարդանքների մասին» և «Խորհուրդներ բոլորին» բաժինները):

Գրի՛ր քո մեկ օրվա օրագիրը:

Թոմ Սոյերի արկածները

Կարևորելով ինֆորմացիայի միջոցների դերը այսօրվա կյանքում՝ նպատակահարմար ենք գտել ընթերցարանում առաջարկել նաև այնպիսի առաջադրանքներ, որոնք կատարելու համար աշակերտը պետք է աշխատի հանրագիտարանի և այլ տեղեկատվական գրականության հետ.

Ի՞նչ գիտես արծիվների (չղջիկների, ագռավների, աղվեսների) մասին:

Գրի՛ր տեղեկություններ օձերի մասին:

Աշակերտի գեղարվեստական ճաշակը զարգացնելու են օգնեն հետևյալ ինքնատիպ առաջադրանքները.

Գրի՛ր ինչպես կնկարագրեիր «Չախչախ թագավորը» գրքի կազմը, եթե գրքի հրատարակիչը լինեիր:

Չախչախ թագավորը

Ի՞նչ գույներ կօգտագործես այս բանաստեղծությունը նկարազարդելիս:

Համերգ

Ի՞նչ գույներ և նկարներ կօգտագործես այս բանաստեղծությունն առանձին գրքույկով հրատարակելու համար:

Մայրամուտ

Մի քանի խոսք՝ չափածո ստեղծագործությունների ուսուցման առանձնահատկությունների վերաբերյալ:

Բանաստեղծության ուսուցումը չի ենթադրում բանաստեղծության սերտում, թեպետ մենք դեմ չենք բերանացի սովորելուն: Չափածո գործերի ուսուցումը պիտի հիմնվի աշակերտի կգացողության, գեղեցիկը տեսնելու, այն գնահատելու հմտությունները զարգացնելու վրա: Այդ նպատակով առաջարկվում են հետևյալ հարցերը.

Գեղեցի՞կ է հնչում բանաստեղծությունը: Ինչո՞ւ:

Ո՞ր պատկերն է քեզ դուր գալիս: Ինչո՞ւ:

Ինչպե՞ս ես հասկանում հետևյալ պատկերը (ինչ-որ պատկեր):

Ի՞նչ տողերում է հատկապես լավ արտահայտված այդ տրամադրությունը:

Ավարտենք հանրահայտ մանկավարժ Ջորջ Փոյայի առաջարկած՝ «Ուսուցչի տասը պատվիրաններից» ընտրած մի քանի խոսքով, որոնք, կարծում ենք, օգտակար կլինեն նաև մեր մանկավարժներին*.

Հետաքրքրվեցե՛ք ձեր առարկայով:

Կարողացե՛ք կարդալ աշակերտների դեմքերը: Ջանացե՛ք տեսնել, թե ի՛նչ են սպասում նրանք ձեզանից, ըմբռնե՛ք նրանց դժվարությունները, կարողացե՛ք ձեզ իրենց տեղը դնել:

Մի՛ սահմանափակվեք մերկ տեղեկատվությամբ. ջանացե՛ք աշակերտների մոտ որոշակի ունակություններ, խելքի որոշակի կերտվածք և կանոնապահ աշխատանքի սովորություն զարգացնել:

Ջանացե՛ք նրանց կռահել սովորեցնել:

Ջանացե՛ք նրանց ապացուցել սովորեցնել:

Մի՛ հայտնեք անմիջապես ձեր պատասխանը, թող աշակերտները փորձեն ինքնուրույն այն կռահել, թողե՛ք աշակերտներն իրենք հնարավորին չափ շատ բան գտնեն:

Օգտագործե՛ք գլխի գցող ցուցումները, բայց ձեր կարծիքը բռնի ձևով մի՛ պարտադրեք:

Եվ վերջապես.՝

Հասե՛ք այն բանին, որ ձեր աշակերտները հարցեր տան, կամ ինքնե՛րդ տվեք այն հարցերը, որոնք կարող էին նրանց մոտ ծագել:

Հասե՛ք այն բանին, որ ձեր աշակերտները կարողանան հարցերին պատասխանել, կամ ինքներդ պատասխանեք այդ հարցերին՝ բայց այնպես, ինչպես կարող էին ձեր աշակերտները դրանց պատասխանել:

Բոլոր հանգամանքներում աշխատեք խուսափել այն հարցերից, որոնք չեն ծագում ոչ մեկի մոտ, այդ թվում նաև՝ հենց ձե՛ր մոտ:

---

*«Դպիր» ամսագիր, հ.հ.7-8, 1994թ., էջ 33: